

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻԱՄ ՎՌԱՄԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(1832-1915 թթ.)

Դասախոսություններ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 070(091)(042.4)

ԳՄԴ 76.12 ց7

Հ 872

Հրատարակվել է ԵՊՀ Ժուռնալիստիկայի
ֆակուլտետի գիտխորհրդի
երաշխավորությամբ

Խմբագիր՝ Բ.Գ.Թ., դոցենտ Նադաշ Մարտիրոսյան

Մ. Հովսեփյան

Հ 872 Արևմտահայ մամուլի պատմություն (1832-1915 թթ.):

Դասախոսություններ: -Եր.: ԵՊՀ հրատ., 2014 – 90 էջ:

Դասախոսություններին կցված է բավական հարուստ օժանդակ մասնագիտական գրականության և մամուլի ցանկ: Այդտեղ ընդգրկված մատենագիտական գրքերը, հոդվածները և ուսումնասիրությունները օգտակար կլինեն արևմտահայ մամուլով զբաղվող ուսանողների ու գիտաշխատողների կամ խնդրո առարկա ժամանակաշրջանի արևմտահայ մամուլի դասընթացը ներկայացնող դասախոսների համար:

ՀՏԴ 070(091)(042.4)

ԳՄԴ 76.12 ց7

ISBN 978-5-8084-1914-8

© ԵՊՀ հրատ., 2014

© Մ. Հովսեփյան, 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք	5
-------------	---

Բաժին 1-ին

Պոլսահայ մամուլ

«Լրո զիր»	6
«Հայաստան»	9
«Արևելք» (2 շրջանով)	12
«Մասիս»	18
«Մասիս» գրական շաբաթաթերթ.....	23
«Մեղու» (2 շրջանով).....	26
«Թատրոն»	30
«Բյուզանդիոն».....	32
«Ազատամարտ».....	35
«Ազատամարտ» գրական շաբաթաթերթ	41
«Շանթ» (2 շրջանով).....	44

Բաժին 2-րդ

Զմյուռնահայ մամուլ

«Արշալույս Արարատյան» (2 շրջանով).....	51
«Արևելյան մամուլ» (2 շրջանով)	53
«Դաշինք»	57
«Աշխատանք»	59

Բաժին 3-րդ

Գավառահայ մամուլ

«Արծվի Վասպուրականի»	64
«Արծվիկ Տարոն».....	67
«Բյութանիա».....	69
«Հողդար»	73
Վանի «Աշխատանք» շաբաթաթերթ	77

Օժանդակ գրականության և մամուլի ցանկ	80
---	----

ՄՈՒՏՔ

Հայ մամուլի պատմության առանձին բաժին է կազմում արևմտահայ մամուլը: Այս հարուստ ու բազմազան մամուլի մասին ուսանողների գիտելիքներն առավել ամբողջական և ընդգրկուն դարձնելու նպատակով են գրվել արևմտահայ մամուլի պատմության (1832-1915 թթ.) մասին դասախոսությունները: Ամփոփ կերպով ներկայացված են արևմտահայ ինչպես հայտնի, այնպես էլ քիչ ուսումնասիրված պարբերական մամուլի այն օրգանները, որոնք լուրջ դերակատարություն են ունեցել մեր ժողովրդի կյանքում:

Արևմտահայ մամուլի պատմության (1832-1915 թթ.) մասին դասախոսությունները ներկայացնում են արևմտահայ ավելի քան քսան պարբերականի խմբագիրներին, աշխատակիցներին և թղթակիցներին, դրանց հիմնական բաժիններն ու խորագրերը, որդեգրած ուղղվածությունը և դերակատարությունը հայ հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում: Դասախոսությունները պատկերացում են տալիս մեր ժողովրդի համար էական ու վճռորոշ իրադարձությունների նկատմամբ այս կամ այն պարբերականի դրսևորած կեցվածքի և դիրքորոշման մասին: Այս տեսանկյունից են առանձնացված ու ներկայացված պարբերականների խմբագրականները և հրապարակախոսների ու վերլուծաբանների հոդվածներն ու հրապարակումները: Այսպիսով՝ փորձ է արվել ամբողջապես և ոչ թե միայն որևէ կողմով ուսումնասիրել արևմտահայ պարբերականները: Դրանք կտրվածքով դասդասված են պոլսահայ, զմյուռնահայ և գավառահայ բաժինների ներքո:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԱՍՈՒԼ

«ԼՐՈ ԳԻՐ»
(1832-1850 թթ.)

19-րդ դարի սկզբներին Օսմանյան Թուրքիայի համար աշխարհաքաղաքական աննպաստ հանգամանքներով էր թելադրված այդ կայսրության թուլացումը, քայքայումը: Եվրոպական հզոր պետությունների ու Ռուսաստանի միջև հաստատված դիվանագիտական հարաբերությունները Արևելյան հարցում Թուրքիային կախվածության մեջ էին դնում այդ երկրներից, որոնցից յուրաքանչյուրը հետապնդում էր սեփական տնտեսական ու քաղաքական շահը: Երբեմնի լայնածավալ կայսրությունից մնացած տարածքները ցանկացած գնով պահպանելն առաջնահերթ էր թուրքական իշխանությունների համար: Ազգային ինքնագիտակցության բարձրացումը և ինքնորոշման ձգտումը հպատակ ժողովուրդներին պարբերաբար մղում էր ազատագրական շարժումների: Նրանց հանդարտեցնելու և Ռուսաստանի ու Եվրոպական պետությունների ճնշումներին դիմակայելու նպատակով Թուրքիայում ընդունվում էին օրենքներ, բարենորոգչական ծրագրեր, Սահմանադրություն (1876 թ.):

Բարենորոգումների կամ Թանգիմաթի գաղափարից առավել հաճախ ոգևորվել են օսմանահպատակ հայերը: Արևմտահայ դեմոկրատական և լուսավորական գաղափարներով տոգորված մտավորականության սերունդը կենտրոնացած էր Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլսում: Այդ առաջադեմ մտավորականները և ազգային հասարակական գործիչները և՛ Թուրքիայի, և՛ Ազգային Սահմանադրությունների ընձեռած հնարավորությունների սահմաններում արևմտահայությանը լուսավորելու, կրթելու ճանա-

պարհով փորձեցին ունենալ ազգային ինքնավարություն և հասնել արևմտահայության սոցիալ-տնտեսական կենսապայմանների բարելավմանը: Նրանք այս գործընթացում որպես առաջին քայլ համարեցին հայ պարբերական մամուլի հիմնումը՝ օգտագործելով Թանգիմաթով թույլատրված իրենց այդ իրավունքը:

«Լրո գիրը» կամ «Լրո գիր մեծի տերությանն օսմանյան» թերթը լույս է տեսել 1832-1850 թթ. սկզբնապես որպես 1831 թ. Կ. Պոլսում հիմնված թուրքերեն առաջին թերթի՝ «Թագվիմի վագայիի» («Դեպքերի շար») թարգմանված տարբերակ, ապա որպես ինքնուրույն պարբերական:

Թարգմանիչ-լրագրողների՝ Գևորգ Գրիգորյանի և Հուսիկ քահանայի ջանքերով էր ստեղծվում «Թագվիմի վագայիի» հայերեն տարբերակը:

1846 թ. սկսած՝ «Լրո գրի» խմբագիրն էր Գալուստ Արապյանը: Նա ճիշտ որոշում է կայացնում՝ թերթին տալ ազգային բովանդակություն, անդրադառնալ ազգային հիմնահարցերին և ոչ միայն պաշտոնական գրագրությանն ու կառավարական որոշումներին, հրահանգներին, հրամաններին ու պաշտոնատար անձանց կողմից հրապարակման համար թույլատրված ներպետական և միջազգային լրահոսին տրամադրված նյութերին:

Գ.Արապյանը փորձում էր Օսմանյան Թուրքիայում պարբերական մամուլին թույլատրված խոսքի ազատության շրջանակներում պատկերացում տալ հատկապես պոլսահայ կյանքի և հայ հասարակության տարբեր շերտերի ու խավերի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների ու անհամաձայնությունների մասին:

Արևմտահայ իրականության մեջ 1840-ական թվականներին սոցիալական տեղաշարժերը բերել էին արհեստավորական ընկերակցությունների և միությունների (էսնաֆությունների) դերի ու կշռի մեծացմանը: Ազգային կյանքի կառավարման գործընթացում նրանք դարձել էին ազդեցիկ ամիրայական դասի լուրջ հակառակորդը: «Լրո գիրը» լուսաբանել է ամիրայության և էսնաֆություննե-

րի միջև ծագած բուռն պայքարը, որը լուծելու միջամուխ էին լինում պատրիարքն ու սուլթանը: Գ.Արապյանը շարունակում էր դատապարտել արհեստավորական դասին անգամ 1847 թ. արևմտահայերի Ազգային ժողովի հիմնվելուց և դրանում էսնաֆության ներկայացուցիչներ ներգրավելուց հետո: Գ.Արապյանը չէր լուսաբանում Ազգային ժողովի նիստերն ու երեսփոխանների գործունեությունը, որովհետև չէր ընդունում էսնաֆների մուտքն այդտեղ:

«Լրո գիրը» արձագանքում և դրական գծերով էր ներկայացնում միայն Բարձր դռանը և սուլթանին ծառայություններ մատուցած հայ ամիրաների ու մեծատունների այն գործողություններն ու արարքները, որոնցով նրանք մեծ դերակատարություն էին ունեցել Օսմանյան Թուրքիայի պետական ու տնտեսական կյանքում:

Օսմանյան Թուրքիայում պարբերական մամուլը դիտվում էր որպես վնասակար հասարակական երևույթ: Մասնագետների կարծիքով՝ դրանով էր պայմանավորված այն, որ գրեթե չեն պահպանվել թուրքական առաջին պարբերականները: Քանի որ «Լրո գիրը» սկզբնապես թուրքական «Թագվիմի վագայիի» պաշտոնաթերթի թարգմանությունն էր, բնական է, որ մեծանում է «Լրո գիրն» այդ թերթի բնօրինակ դիտարկելու հնարավորությունը: Այսքանով է միայն կարևորվում նրա պատմական փաստաթղթային արժեքը, թեև կուզ որպես ազգային պարբերականի: Այս հանգամանքը, սակայն, չի խանգարել, որ «Լրո գիրը» ժամանակին ենթարկվեր հալածանքների պետական պաշտոնատար անձանց կողմից և պարբերաբար խափանվեր ու կրկին վերահրատարակվեր Կ. Պոլսի արևմտահայ պարբերականների կողմից սուլթանին գրած խնդրագրերի օգնությամբ:

Թերթը դադարում է լույս տեսնել 1850 թվականին:

«ՀԱՅԱՍՏԱՆ» (1846-1852 թթ.)

Տպագրվել է Կ.Պոլսում 1846-1852 թթ.:

«Հայաստանը» Կ. Պոլսի արևմտահայոց Պատրիարքարանի պաշտոնաթերթն էր: Ներկայացնում էր Պատրիարքարանի որոշումներն ու կարգադրությունները, ազգային ներքին կյանքի անցուդարձի մասին լուրեր, վերլուծություններ:

Պարբերականը սկզբնապես ուներ 2 խմբագիր՝ Հովհաննես Չամուռճյանը և Մկրտիչ Աղաթոնը:

1846-1848 թթ. «Հայաստանը» խմբագրել է Հովհ. Չամուռճյանը (Տեր-Կարապետյան Տերոյենց):

1848- 1850 թթ. թերթի խմբագիրն էր Մ. Աղաթոնը:

1850 թ. փետրվարի 6-ից մինչև 1852 թ. հունվարի 21-ը կրկին Հովհ. Չամուռճյանն է խմբագրել «Հայաստանը»:

«Հայաստանի» խմբագիրների հասարակական-քաղաքական հայացքները որոշիչ ազդեցություն են ունեցել թերթի ուղղվածության և նպատակների վրա: Հովհ. Չամուռճյանը կոչում էր Թուրքիայում տիրող սոցիալ-քաղաքական իրավիճակի պահպանմանը: Մ.Աղաթոնը սահմանադրական միապետության կողմնակից էր: Նա դեմ էր արմատական հեղափոխություններին, թեև պաշտպանում էր ազգային-ազատագրական շարժման ջատագովներին:

Հովհ. Չամուռճյանը ծայրահեղ էր իր տեսակետներում մասնավորապես կրոնաբարոյախոսական հարցերում բանավիճելիս: Հրապարակախոսական հոդվածներում նա բանավեճի էր բռնվում արևմտահայ լիբերալ-դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչների հետ:

Չամուռճյանը ընդդիմանում էր լուսավորության և առաջադիմության կողմնակիցներին: Նա դեմ էր արտահայտվում եվրոպական երկրներում ծավալված ազգային-ազատագրական և հեղափո-

խական-դեմոկրատական շարժումներին: Այս ամենն արտացոլված է նրա խմբագրության տարիներին (1846-1848 թթ.) լույս տեսած «Հաստան» թերթի էջերում:

Հովհ. Չամուռճյանը պահպանողական հայացքներ ուներ: Նրա տեսակետները իրենց արտահայտությունն են գտել նաև 1855 թ. հրատարակված հայատառ թուրքերեն «Զոհալ» և 1857-1866 թթ. արդեն հայերեն «Երևակ» թերթերում:

Պահպանողական ուղղությունը գերիշխող էր «Հայաստանի» չամուռճյանական խմբագրման շրջանի համար: Թերթը հիմնականում փորձել է ներկայացնել Օսմանյան պետության և պոլսահայ համայնքի ու գավառահայության կյանքում կատարվող իրադարձությունները, արևմտահայությանը մտահոգող խնդիրները:

Մ. Աղաթոնը Հովհ. Չամուռճյանին հակադրվում էր իր ազատամիտ հայացքներով: 1848-1849 թթ. նա «Հայաստանի» խմբագրությունը վերածում է եվրոպական երկրներում բարձրագույն կրթություն ստացած ու Կ. Պոլիս վերադարձած ազատամիտ երիտասարդների հավաքատեղիի: Նրանցից շատերը (Մկրտիչ Մոմճյան, Նիկողայոս Զորայան, Հարություն Մոմճյան, Միքայել Աղաթոն և այլք) դառնում են թերթի աշխատակիցներ: Իրենց հոգվածներով նրանք հակադրվում էին պահպանողական հոսանքի ներկայացուցիչների տեսակետներին և գտնում էին, որ ազգային կյանքի առաջադիմության անհրաժեշտ պայմանը ազգը լուսավորելն ու կրթելն է: Ըստ նրանց՝ ընդհանուր բարեկեցության կարելի է հասնել միայն կրթվելով և իբրև ազգ միասնական դառնալով: Ընդ որում, այդ գործընթացում Մ. Աղաթոնը և նրա գաղափարակիցները կարևորում էին այն հայ մեծահարուստների դերը, որոնք իրենց ունեցվածքի մի մասը պիտի նպատակաուղղեին ազգօգուտ ձեռնարկների իրականացման նպատակի համար:

Ազգի լուսավորության գործում առանձնահատուկ տեղ էին գրավում նաև ազգային կրթօջախների բարենորոգության և աճող

սերնդի (հատկապես իգական սեռի ներկայացուցիչների) հայեցի դաստիարակության խնդիրները:

Մ. Աղաթոնի խմբագրության շրջանում (1848-1850 թթ.) «Հայաստանն» հակված էր այն տեսակետին, որ անհրաժեշտ է գյուղատնտեսական գիտելիքներ տալ բուն գավառահայությանը: Բացի այդ՝ թերթը պաշտոնատար անձանց հիշեցնում էր, որ եթե նրանք ցանկանում են իրապես բարեփոխել երկիրը, առաջին հերթին պիտի ձգտեն ունենալ զարգացած գյուղատնտեսություն:

«Հայաստանն» այս կամ այն չափով պատկերացում էր տալիս արևմտահայ իրականության, բուն գավառի բնակչության առջև ծառացած խնդիրների, նրանց առօրյայի, կրթական-մշակութային կյանքի մասին:

«Ազգային» խորագրի ներքո թերթն անդրադառնում էր Ազգային ժողովի և ազգային մյուս կառույցների գործունեությանը, այդ շրջանում արևմտահայությանը մտահոգող կաթոլիկ-լուսավորչական հակամարտության դրսևորումներին և այլն: Դատապարտում էր ազգային կառույցների ենթարկվածությունն ու չափից դուրս կախվածությունը թուրքական իշխանություններից, նաև՝ նրանց ներքին վախը պետական հայահալած քաղաքականության, գավառում «Թանգիմաթը» կամ բարենորոգումներ չկիրառելու փորձերի մասին չբարձրաձայնելու, դրա դեմ չպայքարելու համար:

«ԱՐՆԵՎԵԼՔ»
(1884-1896 թթ.)
(1898-1912 թթ.)

«Արևելք» օրաթերթը լույս է տեսել 1884-1896 թթ. և 1898-1912 թթ.: Արտոնատերը Ստեփան Տամատյանն էր: Ունեցել է մի քանի խմբագիր (Բյուզանդ Քեչյան, Լևոն Բաշալյան, Զ. Յուսուֆյան, Վահան Թեքեյան): 1911 թ. թերթը անվանվել է «Լուսին», «Պայքար», «Լրաբեր» և «Չեզոք»:

Գրական բաժնի ղեկավարը «Արևելքի» հիմնադրման նախաձեռնող անդամներից Արփիար Արփիարյանն էր: Նա և իր գաղափարակից ընկերները (Գր. Զոհրապ, Լ. Բաշալյան, Տ. Կամսարական, Մ. Կյուրճյան) նոր լրագրության հիմքը դրեցին արևմտահայ մամուլի պատմության մեջ թե՛ քաղաքական ու ծրագրային մոտեցումների, թե՛ ժանրային բազմազանության ու նորության առումով: Նրանց շնորհիվ էր «Արևելքը» տարբերվում արևմտահայ նախորդ շրջանի և իրեն ժամանակակից մյուս պարբերականներից:

«Արևելքում» կար գաղափարական տեսակետների և սկզբունքների տարբերակվածություն: Դա դրսևորվում էր անգամ թերթի կառուցվածքային և թեմատիկ նախասիրությունների բաժանումներում: Պարբերականում միահյուսվում էին արևմտահայ ազատականների կամ աջերի (հանձին Բ. Քեչյանի ու նրա համախոհների) և դեմոկրատների կամ ձախերի (հանձին Ա. Արփիարյանի և նրա գաղափարակիցների) մոտեցումները հասարակական բարքերի վերափոխման և տնտեսական առաջընթացի կամ զարգացման հիմնահարցերի լուծման ուղիների համատեղ փնտրտուքի խնդրում: Լուծման սպասող ազգային մնացած հիմնահարցերում մոտեցումները տարբեր էին:

«Արևելքի» վարչության ազատամիտ թևը մերժողական կեցվածք էր ընդունել արևմտահայության ազատագրական շարժման և

ազգային ինքնորոշման երազանքի նկատմամբ, իսկ դեմոկրատական թեր փորձում էր Արևմտյան Հայաստանի սոցիալ-քաղաքական իրական պատկերը ներկայացնելուն զուգընթաց ժողովրդին կողմնորոշել դեպի ազգային ինքնորոշում և հանուն հայեցի դիմագծի պահպանման: Պարբերականի վարչության քննադատությունների շրջանակը վերաբերում էր Ազգային Սահմանադրության թերություններին, բայց ոչ պետական հայահալած քաղաքականությանը, հայ ազգային և հոգևոր կառույցների, դրանց վերնախավի ապագային ու ոչ կառուցողական գործունեությանը: Այնինչ դեմոկրատական թեր, հանձին Ա. Արփիարյանի և նրա համախոհների, մերժողական քննադատությամբ էր հանդես գալիս վերոհիշյալ հիմնահարցերում: Նրանց հրապարակումները, ժանրային ու արտահայտչաձևային նոր մոտեցումները նպաստեցին այն բանին, որ արևմտահայ մամուլի էջերում առաջին անգամ առավել խոր և ամբողջական պատկերացում տրվեց Արևմտահայաստանի ու նրա ժողովրդի կենսապայմանների, չլուծված խնդիրների և մտադրությունների մասին:

«Արևելքի» առաջին երկու էջերում տեղ էին գտնում պաշտոնական տեսակետներ արտահայտող հրապարակումներ: Թերթի երրորդ էջը մշտապես անդրադառնում էր Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր կացությանը, ներկայացնում էր բուն գավառում ժողովրդին մտահոգող խնդիրները և հանդես էր գալիս դրանցից ձեռքագատվելու առաջարկներով:

«Արևելք» պարբերականն ի սկզբանե ձգտում էր լինել առաջադիմական (բայց ոչ արմատական) և պահպանողական (բայց ոչ հետադիմական) մամուլի օրգան: Գործնականում դա բավական բարդ խնդիր էր, եթե հաշվի առնենք նաև պարբերականի հրատարակման ժամանակաշրջանը (գրաքննություն և ազգային հալածանքների խորացում, Աբդուլ Համիդի կողմից արևմտահայության ջարդերի ծրագրման և իրագործման քաղաքականություն, ժողովրդի սոցիալական վիճակի վատթարացում և պանդխտության ալիքի բարձրացում): «Արևելքը», սակայն, կարողանում էր մեծ մասամբ հասնել իր

առջև դրված ծրագրային նպատակների իրականացմանը: Ինչ-որ առումով այն արևմտահայ իրականության մեջ «Մշակին» հավասարագոր դեր է կատարել:

Իբրև արևմտահայ լիբերալ մամուլի օրգան՝ «Արևելքը» փորձում էր նպաստել կապիտալիստական արտադրահարաբերությունների հաստատմանը: Այդ նպատակին էին ծառայում այն հոդվածները, որոնցում քննարկվում էին Օսմանյան Թուրքիայի տնտեսության զարգացման և կապիտալիստական արտադրանականին անցնելու, հարկային ու մաքսային ոլորտների աշխատանքը բարեփոխելու հիմնահարցերը: «Արևելքն» անդրադառնում էր գյուղատնտեսական ապրանքների շրջանառության և իրացման, շուկայում եվրոպական էժան արտադրատեսակների հետ տեղական ապրանքների մրցակցության ոչ ճիշտ կազմակերպման, գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացմանը խանգարող պատճառներին: Թերթը պաշտպանում էր տեղական կամ ավելի կոնկրետ՝ արևմտահայ գավառի արտադրողի շահերը:

«Արևելքը» առաջին և երկրորդ էջերում այս կարգի հոդվածների միջոցով ձգտում էր նպաստել արևմտահայ բուրժուազիայի կայացմանը և իրավունքների պաշտպանությանը: Միևնույն ժամանակ թերթը հնարավորություն էր տալիս 3-րդ էջում դեմոկրատական հայացքներ դավանող իր աշխատակիցներին արտահայտելու սեփական տեսակետները արևմտահայ գավառի խնդիրները վերհանելու և դրանց լուծման ճանապարհները մատնանշելու միջոցով:

Առանձնապես սուր քննադատության էին ենթարկվում անգործության դատապարտված Ազգային ժողովն իր երեսփոխաններով և այն հոսանքները կամ ուժերը, որոնք հավատում էին, թե Օսմանյան կայսրությունում հայերը Ազգային Սահմանադրության միջոցով կարող են ինքնակառավարվել:

Լուրերի, թղթակցությունների, ռեպորտաժների, քրոնիկների օգնությամբ Ա. Արփիարյանն իր համախոհների հետ օբյեկտիվ պատկերացում էր տալիս արևմտահայության տնտեսական հիմնա-

հարցերի մասին: Նշվում էր, թե հատուկ մշակված սոցիալ-քաղաքական ծրագրի հետևանքով ինչպես էր գավառահայությունը ունեզրկվում, հողագրկվում և բռնում արտագաղթի, պանդխտության, կրոնափոխության և ուժացման ճանապարհը: «Արևելքի» երրորդ էջի հրապարակախոսներն ու թղթակիցները առաջարկում էին գաղթի դեմն առնելու համար զարգացնել գյուղատնտեսության նոր ճյուղեր, զարկ տալ արհեստներին և նպաստել արդյունաբերության հաստատմանը: Բացի այդ՝ նրանք առաջարկում էին արևմտահայ գավառի գյուղերում հիմնել և պահպանել ազգային դպրոցներ, որ աճող սերունդը տեղում ստանար անհրաժեշտ կրթություն և դրա համար չլքեր հայրենիքը:

«Արևելքը» կարևորում էր դպրոցների դերը մայրենի լեզվով ազգային կրթության, հայեցի դաստիարակության, ֆիզիկական պատրաստվածության և արհեստների ուսուցման առումով:

Թերթը բարձրաձայնում էր արևմտահայ գավառի կրթական խնդիրները, այդ թվում՝ ուսումնական միասնական ծրագրերի, նոր դասագրքերի ու դասավանդման ժամանակակից մեթոդների, ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության և նրանց սոցիալ-տնտեսական հիմնահարցերը: Այս խնդիրների արձարծումը թելադրված էր ժամանակի պահանջով. ուժեղացել էր 1880-ական թվականներին թուրքական պետական ապարատի վերահսկողությունը հայկական կրթօջախների նկատմամբ (ի դեպ, նույն շրջանում ռուսական կայսրությունը հայկական դպրոցների նկատմամբ վարում էր նմանատիպ քաղաքականություն, ինչը նույնպես արժանանում էր «Արևելքի» դեմոկրատական թևի քննադատությանը):

«Արևելքի» ուշադրության կենտրոնում էին հայ եկեղեցու կաթողիկոսի, նաև Կ.Պոլսի պատրիարքների ընտրության գործընթացները: Կաթողիկոսական ընտրությունների մասին հիմնականում պատկերացում էին տալիս 1885 թ. Սբ. Էջմիածին գործուղված Ա.Արփիարյանի հրապարակումները: Ըստ պարբերականի՝ արևմտահա-

յության համար ֆիզիկական կոտորածներին հավասարագոր էին հոգևոր-բարոյական խաթարման դրսևորումները:

«Արևելքը» հանրության ուշադրությունն էր հրավիրում մասնավորապես իգական սեռի կրթության և լուսավորության խնդիրների վրա: «Արևելքը» միևնույն ժամանակ քննադատում էր Սրբուհի Տյուսաբին, ում ստեղծագործությունները, թերթի համոզմամբ, չէին արտացոլում արևմտահայ կանանց խնդիրներն ու հոգեբանությունը:

Ա. Արփիարյանի գրական հայացքները հոգեհարազատ էին «Արևելքում» տպագրվող նրա գործընկերներին ու գրողներին (Լ. Բաշալյան, Տ. Կամսարական, Գր. Զոհրապ, Մ. Կյուրճյան, Հ. Ասատուր): Նրանք թերթը դարձրել էին միջոց՝ տեսականորեն ու գործնականորեն հիմնավորելու համար 1880-ական թվականներին իրենց հիմնադրած արևմտահայ ռեալիստական գրական շարժումը:

Տեսական հիմնավորումներին զուգընթաց այս շարժման ներկայացուցիչներն իրենց նորավեպերը, քրոնիկոնները և վիպակներն էին տպագրում «Արևելքի» էջերում: Թերթը տպագրում էր այդ ստեղծագործությունների վերաբերյալ նաև գրաքննադատական հոդվածներ, գրախոսականներ:

«Արևելքի» գրաքննադատներն անդրադառնում էին նաև արևելահայ գրականության զարգացման միտումներին: Առանձին ուսումնասիրություններ էին տպագրվում Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Գր. Արծրունու, Բաֆֆու ստեղծագործությունների մասին: Տպագրվում է Բաֆֆու «Խաչագողի հիշատակարանը»: Արևելահայ գրականությանն անդրադառնալիս «Արևելքը», բնականաբար, ուշադրություն էր դարձնում ռուս գրականությանը, մշակույթին և դրանց խաղացած դերին արևելահայ գրականության ու մշակույթի զարգացման գործում:

Գրական և հասարակական-քաղաքական հայացքների տարբերությունն ի վերջո բերում է նրան, որ 1890-ական թվականների սկզբին Ա. Արփիարյանը և նրա համախոհները այլևս չեն աշխա-

տակցում «Արևելքին», այլ հանդես են գալիս «Հայրենիք» օրաթերում և «Մասիս» գրական հանդեսում:

1890 թ. «Արևելքը» դառնում է հիմնականում պահպանողական մամուլի օրգան: Օրաթերթի խմբագիր Բ. Քեչյանը դեմ էր արտահայտվում արևմտահայության ազգային-ազատագրական շարժման կողմնակիցներին և հավատում էր, որ Օսմանյան Թուրքիայում պետական բարեփոխումները կբավարարեն հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական պահանջները: Գում-Գափուի ցույցից հետո Բ. Քեչյանը սկսում է «նալին ու մեխին խփել», այսինքն՝ տատանվել իր տեսակետներում: Նա այլևս միանշանակ չէր հավատում, որ սուլթանական Թուրքիան չի ուզում հայերին կոտորել ու վտարել իրենց հայրենիքից, թեև չէր ողջունում հեղափոխական ճանապարհը նախընտրողներին:

1894-1896 թթ. Բ. Քեչյանը արևմտահայության ջարդերի ու կոտորածների մասին խուսափում էր բարձրաձայնել «Արևելքում»: Այդ ամենը նա ներկայացնում էր որպես թուրքական թերթերից ծաղկաքաղ արված լրաքաղ: Թուրքական գրաքննությունը, այնուամենայնիվ, գրեթե 2 տարով փակում է «Արևելքը» (1896 թ. աշնանից մինչև 1898 թ.):

1898-1912 թթ. «Արևելքը» շարունակում է հրատարակվել կրկին որպես պահպանողական պարբերական:

«ՄԱՍԻՍ» (1852-1900 թթ.)

1852 թ. հունվարի 21-ին Հովհ. Չամուռյանը հեռանում է «Հաստան» թերթից: Պարբերականի արտոնատերն է դառնում Կարապետ Ություճյանը: Նա ոչ միայն թերթը վերանվանում է «Մասիս», այլև փոխում է ուղղությունն ու որակը՝ այն վերածելով գրական-քաղաքական ուղղվածություն ունեցող հանդեսի:

Կ. Ություճյանը «Մասիսը» խմբագրել է 1852-1884 թթ.: Նա 1884-1891 թթ. շարունակում էր մնալ թերթի արտոնատեր, բայց «Մասիսը» հրատարակվում էր Կ.Պոլսի «Արևելք» թերթի վարչության կողմից: 1892-1908 թթ. «Մասիսի» խմբագիրներ են դառնում Գրիգոր Զոհրապը, Տիգրան Կամսարականը և Հրանտ Ասատուրը:

Առաջին համարը լույս է տեսել 1852 թ. փետրվարի 2-ին: Իր մուտքով «Մասիսը» նոր փուլ էր խորհրդանշում արևմտահայ մամուլի պատմության մեջ որպես ոչ միայն առաջադեմ լուսավորական հայացքներ կրող ու տարածող, այլև Օսմանյան կայսրության ժողովուրդների սոցիալ-քաղաքական իրական պատկերը ներկայացնող և ազգային-ազատագրական շարժումը ջատագովող պարբերական:

«Մասիսի» հայացքը մշտապես ուղղված էր դեպի Եվրոպա: Քաղաքական ուղղվածություն ունեցող հոդվածներով և հատկապես գրական նյութերով փորձում էր ընթերցողներին պատկերացում տալ եվրոպական հասարակական-քաղաքական և մշակութային առաջադեմ փորձի մասին, ձգտում էր նպաստել արևմտահայության քաղաքական հայացքների ձևավորմանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը:

«Մասիսը» թեև սկսեց ճանապարհի հարթել արևմտահայ դեմոկրատական մամուլի համար՝ դեմ գնալով պահպանողական գաղափարախոսությանը, սակայն Կ. Ություճյանի դավանած լիբերալ տեսակետները թույլ չտվեցին համագործակցել դեմոկրատական

գաղափարախոսության ներկայացուցիչների հետ: Ընդհակառակը, Կ. Ություճյանը բազմաթիվ բանավիճային հոդվածներ է գրել մասնավորապես իր արմատական դեմոկրատական հայացքներով աչքի ընկնող Հ. Սըվաճյանի ու նրա խմբագրած «Մեղվի» դեմ:

«Մասիսի» ազգային-քաղաքական հայացքները բխում էին լիբերալ-լուսավորական գաղափարախոսության ակունքներից: Սկզբնական շրջանում Կ. Ություճյանը և նրա խմբագրակազմը կարծում էին, թե արևմտահայերի ազգային հարցը կլուծվի Թուրքիայում իրականացվելիք բարենորոգումների շրջանակներում: Սակայն աստիճանաբար պարզ է դառնում, որ թյուր էր այդ տեսակետը: Մինչև 1878 թ. Բեռլինի վեհաժողովը «Մասիսը» արդեն այն միտքն էր արծարծում, որ արևմտահայերին ինքնորոշման հարցում կարող են օգնել եվրոպական երկրները, իսկ թուրքական պետությունը ամենևին չափազրգոված չէ բարենորոգումների անցկացմամբ:

«Մասիսի» հրապարակումները վկայում էին, որ Թուրքիայում շարունակվում էր հայահալած քաղաքականությունը: Ներկայացվում էին արևմտահայության սոցիալ-քաղաքական ծանր վիճակը, բռնաճնշումներն ու անպաշտպան դրությունը, նաև՝ այն հուսահատ ջանքերը, որոնցով հայությունը փորձում էր գտնել փրկության ելքեր: Այս տեսակետից բնութագրական են այն հոդվածները, որոնցում թերթը լուսաբանել է 1862 թ. Մկրտիչ Խրիմյանի հաջողությամբ չպսակված պայքարը հանուն մշեցիների ոտնահարվող իրավունքների պաշտպանության:

Արևմտահայությանը քաղաքականապես լուսավորելու նպատակով Կ. Ություճյանը ներկայացնում էր 1850-1860-ական թվականներին եվրոպական երկրներում (Իտալիայում, Հունգարիայում, Լեհաստանում) թափ առած ազգային-ազատագրական շարժումները: Թերթը, սակայն, կոդմ չէր հեղափոխական ճանապարհով, արյունահեղությունների միջոցով ազգային հիմնահարցերը լուծելուն, պաշտպանում էր բարեփոխումների և բանակցությունների միջոցով փոխըմբռնման հասնելու տարբերակը: Այս դիրքորոշումն ունեցող

«Մասիսը» անաչառորեն լուսաբանել է 1862 թ. թուրքական բռնապետության դեմ Ջեյթունում սկսված զինված ապստամբությունը՝ անդրադառնալով պատճառներին և օբյեկտիվորեն պատկերացում տալով զեյթունցիների պահանջների ու դժգոհությունների մասին:

1862-1864 թթ. Ջեյթունի ապստամբության և Բալկանյան թերակղզում թուրքական կայսրության դեմ ծավալված զինված պայքարի կապակցությամբ 1860-ականների վերջին գրված վերլուծական հոդվածներում «Մասիսը» հանգում էր այն տեսակետին, որ արևմտահայերը մեծ հույսեր չպիտի կապեն եվրոպական պետությունների աջակցության հետ, քանզի նրանց համար առաջնայինն իրենց շահն է:

Ազգային ինքնավարությանը և ազգային կյանքը կառավարելուն նպաստող ազդակ էր արևմտահայերի Սահմանադրությունը, որի նախապատրաստական աշխատանքների և, ի վերջո, դեմոկրատական ուժերի ջանքերի շնորհիվ ընդունման, վերափոխման ու կենսահաստատման ողջ գործընթացը 1860-1867 թթ. կտրվածքով արտացոլված և վավերագրված է «Մասիսի» էջերում:

1887-1890 թթ. «Մասիսի» խմբագիր է դառնում Արփիար Արփիարյանը. շաբաթաթերթը որակապես ու բովանդակային առումով մեծապես փոխվում է: Արփիարյանը և նրա գաղափարակիցները (Հ. Ասատուր, Գր. Զոհրապ, Լ. Բաշալյան, Տ. Կամսարական, Ե. Տեմիրճիպաշյան) «Մասիսին» տալիս են քննադատական- առաջադիմական ուղղվածություն և ոգի:

Ա. Արփիարյանի լրագրողական և գրական թիմն այնպես, ինչպես «Արևելք» օրաթերթում, «Մասիսում» նույնպես դրեց նոր լրագրության հիմքերը: Հրապարակախոսական հոդվածների, թղթակցությունների և գրական ստեղծագործությունների միջոցով նրանք փորձում էին նպաստել արևմտահայության հասարակական մտքի վերաձևմանը, գավառի ժողովրդի կարիքների ու խնդիրների մասին օբյեկտիվ պատկերացում ձևավորելուն: Արևմտահայաստանի մասին «Մասիսը» պատկերացում էր տալիս լուրի, թղթակցության, ճամփորդական նոթի, ակնարկի և տեղագրական ժանրերի միջոցով:

Իր օրյեկտիվ քննադատություններով և ազատամիտ տեսակետներով Ա.Արփիարյանի «Մասիսը» մոտենում է Գր.Արծրունու «Մշակին» և մինչև «Արևելքի» հիմնադրումը դառնում է արևմտահայ ամենաազդեցիկ պարբերականը:

Առանձնահատուկ տեղ են գրավում «Մասիսի» էջերում զետեղված Գր. Զոհրապի հրապարակախոսական ակնարկները, նորավեպերը, որոնցում գեղարվեստական կերպարներն առավել քան խոսուն կերպով ընդհանրացնում էին արևմտահայ գավառի ժողովրդին իր հիմնախնդիրներով, հոգեվիճակով, երազանքներով ու հոգու հարստությամբ: Զմյուռնահայ գաղթօջախի մասին Գր. Զոհրապի ակնարկի շնորհիվ «Մասիսում» սկսում են նախընտրել դիմանկարային և գեղարվեստական ակնարկը՝ ճամփորդական, տեղագրական ակնարկներից առավել: Բնորոշ է Ա. Արփիարյանի «Պոլսական դեմքեր» երգիծական դիմանկարային ակնարկաշարը՝ որպես գրական-գեղարվեստական ընդհանրացում: Գեղարվեստական ակնարկի ժանրը լավագույնս դրսևորվել է Հրանտի (Մ.Կյուրճյան) «Պանդուխտի կյանքեն» ակնարկաշարում, որտեղ ակնարկները մոտենում են նովելի ժանրին:

1890 թ. «Մասիսի» խմբագիր է դառնում Գր. Զոհրապը:

Այն տպագրվում էր 3 շաբաթը մեկ: Պարբերականը շարունակում էր պահել գրական ուղղվածությունը՝ իր էջերում զետեղելով առավելապես 1880-ականների արևմտահայ ռեալիստական շարժման ներկայացուցիչների նովելները, գրախոսականներն ու գրաքննադատական հոդվածները: Գր. Զոհրապը «Ծանոթ դեմքեր» շարքում անդրադառնում էր հայ անվանի գրական դեմքերին, նրանց ստեղծագործություններին:

1894 թ. «Մասիսը» վերածվում է երկշաբաթաթերթի, որը հրատարակվում էր Ազգային վարչության Ուսումնական խորհրդի կողմից՝ որպես կրթական ուղղվածություն ունեցող հանդես:

1894-1896 թթ. 80-ականների արևմտահայ ռեալիստական գրական շարժման գրողներն այլևս չէին աշխատակցում դիմափոխված «Մասիսին»:

1896 թ. կեսից «Մասիսը» սկսում է հրատարակվել Արմաշի դպրեվանքի միաբանների ջանքերով: Պարբերականը դառնում է շաբաթաթերթ, որն ավելի շատ գիտակրթական ուղղվածություն ուներ, քան գրական-քաղաքական: Խմբագիրը Մ. Օրմանյանն էր:

1898 թ. վերջից մինչև 1908 թ. «Մասիսը» կրկին արևմտահայ պարբերական մամուլի աշխարհում վերահաստատում է իր առաջատար դիրքը որպես գրական ուղղվածության ազգային-քաղաքական շաբաթաթերթ, որի ուշադրության կենտրոնում ոչ միայն ժամանակի գրական-մշակութային անցուդարձն էր, այլև արևմտահայ իրականությունն իր բազմակողմանի հետաքրքրություններով ու խնդիրներով:

«Մասիսը» մեծ դեր է կատարել եվրոպական գրականության լավագույն արժեքները թարգմանաբար ներկայացնելու, նաև այդ կերպ ժողովրդի մտավոր զարգացմանը նպաստելու գործում:

«ՄԱՍԻՍ» ԳՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ (1900-1908 թթ.)

1900-1908 թթ. «Մասիսը» վերածվել էր հիմնականում գրական ուղղվածության շաբաթաթերթի: Արտոնատերը Կարապետ Ություն-ճյանն էր:

1900-1906 թթ. պարբերականի խմբագիրը Տիգրան Արփիարյանն էր, իսկ 1907-1908 թթ.՝ Ենովք Արմենը:

1900-1908 թթ. «Մասիսը» արտացոլում էր ժամանակի հայ և եվրոպական, ամերիկյան և ռուսական գրականության ընդհանուր պատկերը, նաև պատկերացում էր տալիս գրականագիտական հետաքրքրությունների, գրական հոսանքների և ուղղությունների մասին:

«Մասիսի» ուշադրության կենտրոնում առավելապես հայտնվում էին մի շարք խնդիրներ՝ բովանդակության և ձևի փոխհարաբերություն, գրական ավագ և երիտասարդ սերունդների փոխառնչություններ, եվրոպական, ռուսական, ամերիկյան գեղագիտական առաջատար ուղղությունների, մշակված ավանդույթների ուսումնասիրություն, տեղայնացում ու յուրացում, ռեալիզմի, սիմվոլիզմի, դեկադանսի ազդեցություն և այս առումով հայ գրական նոր սերնդի նախասիրություններ, հայ և համաշխարհային գրական-գեղարվեստական արժեքների ժողովրդականացում և այլն:

Հանդեսի առանձնահատկությունն այն էր, որ այստեղ կարծիքների բազմազանությունն էր աշխատանքային ընդունված սկզբունքը՝ գնահատականների մեջ մերժելով ծայրահեղ մոտեցումները:

Կարծիքների բազմազանության տեսակետից բնորոշ էր, օրինակ, այն, որ Ենովք Արմենը քննադատում էր սիմվոլիզմը, բայց ներկայացվում էր նաև այլոց կողմից բարձրաձայնված հակառակ տեսակետը:

Մշակած գրական ծրագրային քաղաքականությունը «Մասիսը» կյանքի էր կոչում իր շուրջը համախմբված արևմտահայ գրա-

կան-մշակութային բացառիկ ներուժի միջոցով և ստեղծված խորագրերի օգնությամբ:

«Անհետացող դեմքեր» բաժինը ժամանակակիցներին ներկայացնում էր հայ նշանավոր գրողներին, մշակութային և հասարակական գործիչներին դիմանկարների, հուշագրությունների, վերլուծական ու հրապարակախոսական հոդվածների միջոցով: Այն, ճանաչողականից բացի, դաստիարակչական նշանակություն ունեւ հատկապես երիտասարդ սերնդի ստեղծագործողների և ընդհանրապես բոլոր ընթերցողների համար:

Առանձնահատուկ էր «Նորերի» բաժինը, որտեղ «Մասիսը» զետեղում էր արևմտահայ երիտասարդ ու սկսնակ գրողների ստեղծագործությունները՝ դրանց ընտրության մեջ որդեգրելով նորելուկներին խրախուսելու և նրանց առաջին քայլերը ողջունելու մոտեցումը: Հիշատակենք պարբերականի խմբագրակազմի կողմից Մ. Մեծատուրյանի (Մեծարենց), Մ. Պարսամյանի, Զ. Եսայանի և այլոց գրական առաջին քայլերը նկատելը և ողջունելը:

Յուրահատուկ ծրագրային խնդիրներ էր փորձում իրականացնել «Գավառային գրականություն» բաժինը: Այստեղ «Մասիսը» տպագրում էր արևմտահայ գավառը պատկերող կամ ներկայացնող բանաստեղծների և արձակագիրների հաջողված ռեալիստական ստեղծագործությունները: «Մասիսը» հատկապես 1907-1908 թթ. այս բաժնում զետեղված գավառահայ գրականության ուշագրավ նմուշների միջոցով փորձում էր նպաստել արևմտահայ գրականության զարգացմանը:

Մեկ այլ՝ «Կնոջական գրականություն» խորագրի ներքո հանդեսը ընթերցողներին ծանոթացնում էր ժամանակի արևմտահայ կին գրողների ստեղծագործություններին՝ ամեն կերպ աջակցելով և խրախուսելով նրանց մուտքը հայ գրական աշխարհ: «Մասիսը» տպագրել է ֆեմինիզմի և գրական-մշակութային կյանքում կնոջ դերի շուրջ արևմտահայ իրականության մեջ հնչող տարբեր, հաճախ իրարամերժ կարծիքներ՝ ծավալելով լայն քննարկում:

Արևմտահայ գրականության զարգացմանը նպաստելու նպատակով ուրույն մոտեցում էր որդեգրվել՝ թարգմանությունների միջոցով ներկայացնել արտասահմանյան գրականության դասական և ժամանակակից նվաճումները: Պարբերականն այս առումով մեծ ուշադրություն է դարձրել ֆրանսիական գրական արժեքների և գրաքննադատական տեսությունների ու վերլուծությունների հետ իր ընթերցողների հաղորդակցման խնդրին:

Գրական քաղաքականության հետևողական իրագործումը «Մասիսին» դարձրեց արևմտահայ մամուլի առաջադեմ հրատարակություն, որը մեծապես ազդել է արևմտահայ գրականության զարգացման ու առաջընթացի վրա:

«ՄԵՂՈՒ»
(1856-1865 թթ.)
(1872-1874 թթ.)

«Մեղու» հանդեսն ունեցել է հրատարակության 2 շրջան: 1-ին շրջանում (1856-1865 թթ.) «Մեղվի» խմբագիրը Հարություն Սըվաճյանն էր, իսկ 2-րդ շրջանում (1872-1874 թթ.)՝ Հակոբ Պարոնյանը: Հրատարակության ողջ ընթացքում «Մեղուն» եղել է արևմտահայ դեմոկրատական գաղափարախոսության կրողն ու արտահայտիչը:

Հ. Սըվաճյանի «Մեղուն» ուներ որոշակի ուղղվածություն և փորձում էր իր հրապարակումներով վերհանել արևմտահայ իրականության ու թուրքական պետության դատապարտելի երևույթները, խորամուխ լինել դրանց դրդապատճառների մեջ: «Մեղուն» ինչ խնդրի անդրադառնար, հիմքում դնում էր աշխատավոր, հասարակ ժողովրդի իրավունքների պաշտպանությունը և ամեն կերպ ձգտում էր նպաստել արևմտահայության լուսավորությանն ու բարեկեցությանը՝ ուշադրության կենտրոնում պահելով ազգային-ազատագրության հարցը և քննարկելով դրա լուծման ուղիները:

«Մեղու» հանդեսի խմբագիր Հ. Սըվաճյանի լայնախոհությունը ստեղծում է մի իրավիճակ, որը տևում է մինչև Ազգային Սահմանադրության ընդունումը, երբ պարբերականի էջերում իրենց հոդվածներն էին տպագրում արևմտահայ լիբերալ-պահպանողական գաղափարախոսական հոսանքի ներկայացուցիչները և մասնավորապես թերթի հովանավոր Գրիգոր Օտյանը:

Հ. Սըվաճյանը չէր հարում արևմտահայ լիբերալ-սահմանադրական ու պահպանողական գաղափարախոսություններին: Նրա հրապարակախոսական ժառանգությունը հակառակն է ապացուցում: Սըվաճյանն, ի տարբերություն վերջինների, արևմտահայության սոցիալ-տնտեսական ծանր կացությունը պայմանավորում էր ոչ թե եվրոպական կապիտալի ներխուժմամբ, այլ սոցիալական կրկնակի շահագործման համակարգով:

Խմբագիրը քննադատում էր Ազգային, Կրոնական ու Սահմանադրական ժողովներին, Ազգային վարչությանը և Պատրիարքարանին՝ ժողովրդի իրավունքները չպաշտպանելու համար: Սըվաճյանը դեմ էր «Մասիսի» և լիբերալների հայացքներին ազգային ինքնորոշման հարցում:

1860-ական թվականների արևմտահայ սահմանադրական շարժումն իր բնույթով երկփեղկված էր: Այս երկատվածությունը դրսևորվել է Հ. Սըվաճյանի աշխարհայացքում: Համախոհների հետ երգիծաբան հրապարակախոսը սահմանադրական շարժումը տարավ դեմոկրատական հունով իր հիմնադրած «Մեղու» պարբերականով:

Սկզբնական շրջանում «Մեղվի» խմբագիրը գտնում էր, որ լուսավորության և ժողովրդին կրթելու միջոցով, առանց հասարակական կարգի փոփոխության, հնարավոր է հասնել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը: Ազգային հարցի լուծումը նա կապում էր Թուրքիայի հանդեպ եվրոպական պետությունների կիրառելիք դիվանագիտական ճնշումների, ինչ-որ տեղ նաև Թանզիմաթի հետ: Այդ տարիներին (1856-1858 թթ.) տուրք տալով Գր. Օտյանի լուսավորական լիբերալիզմին՝ Հ.Սըվաճյանն առաջարկում էր առկա հիմնահարցերը լուծել ազգային համերաշխության ճանապարհով:

1859 թ. սկսած՝ նա աստիճանաբար հեռանում է լիբերալիզմից և նախընտրում դեմոկրատիզմի ուղին: Խմբագրի աշխարհընկալման և գաղափարական թրծման գործում մեծ ազդեցություն են ունեցել Մ. Նալբանդյանի հետ նրա շփումն ու համագործակցությունը, ինչն արտացոլվել է «Մեղվի» էջերում:

1861թ. «Մեղուն» կառավարության հրամանով դադարում է լույս տեսնել: Վերահրատարակվելու թույլտվություն ստանալուց հետո Հ. Սըվաճյանը կրկին դեմոկրատական պայքարի առաջին շարքերում էր: 1862-1865 թթ. նա արևմտահայ իրականության մեջ ծավալված դեմոկրատական շարժման մեկնակետը համարում է հողային

հարցը, որի լուծումը կբերեր արևմտահայ կյանքում դրանից ածանցված և գլուխ բարձրացրած մնացյալ խնդիրների լուծմանը: «Մեղուն» այս առումով անդրադառնում և իր տեսակետները հիմնավորում էր Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ և «Երկու տող» պամֆլետում արտահայտված դրույթներով:

Հոդային հարցին գուցահեռ՝ 1862 թ. «Մեղուն» անդրադառնում էր ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությանը՝ նյութեր տպագրելով իտալական ազատագրական շարժման ու դրա առաջնորդ Ջ. Գարիբալդիի գործունեության մասին: Պարբերականն ընթերցողներին հանգամանորեն ներկայացնում էր 1862 թ. Ջեյթունի ապստամբությունը՝ դրվատելով մասնակիցներին որպես ազատատենչ հայորդիների: Իր հոդվածներում Հ. Սըվաճյանը երգիծանքի ուժով քննադատում էր սուլթանական վարչակարգի քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ: Նա երանելի էր համարում հանուն ազգի ազատագրության նահատակվելը, ընդ որում, այս կարգի հողվածներում կարողանում էր երգիծանքը վարպետորեն կիրառել «Մեղվի» գաղափարական պայքարի զինանոցում:

1865 թ. «Մեղուն» կրկին փակվում է: Նորից վերահրատարակվում է 1870 թ.՝ շարունակելու համար կիսատ մնացած ծրագրերը: Այս շրջանում սկիզբ է առնում Հ. Սըվաճյանի բարեկամությունն ու համագործակցությունը Հակոբ Պարոնյանի՝ «Մեղվի» ապագա խմբագրի հետ: Պահպանողական ուժերի և թուրքական կառավարության պատասխանը չի ուշանում. 1871 թ. վերջերին «Մեղուն», որն ուներ նաև ֆինանսական խնդիրներ, նորից փակվում է, հետո կրկին բացվում:

Դժվարություններով և անկանոն պարբերականությամբ էր հանդեսը հրատարակվում մինչև 1872 թ., երբ, մնալով որպես արտոնատեր, Հ. Սըվաճյանը «Մեղվի» խմբագրությունն անվճար հիմունքներով հանձնում է Հակոբ Պարոնյանին: Սկսվում է «Մեղուն» երգիծաթերթի 2-րդ շրջափուլը: Սըվաճյանը դեռևս հողվածներ էր տպա-

գրում պարբերականում՝ հանդես գալով Մեչուխեչա, Անիկա ծածկանուններով և «Ֆ.» ստորագրությամբ:

Հ.Պարոնյանի խմբագրած «Մեղուն» շարունակում է Հ.Սըվաճյանի ավանդույթները, թեմատիկ հիմնական ուղղությունները և ավելի է խորանցում թերթի դեմոկրատական երգիծական ուղղվածությունը: Հ.Պարոնյանը սուր երգիծանքով էր գրում հայ և թուրք կեղեքիչների, մեծահարուստների, պաշտոնատար անձանց անմարդկային արարքների մասին, քննադատում էր ազգային մարմինների, հատկապես Քաղաքական ժողովի և անունով միայն, բայց ոչ կոչումով հոգևորականների (ո՛չ եկեղեցու) ապագային գործելակերպը:

Երգիծաբանն իր հրապարակախոսական հոդվածներում բարձրաձայնում էր Ազգային Սահմանադրության դրույթները կյանքի կոչելու մասին, հորդորում էր չանտեսել գավառահայության խնդիրները և թուրքական պետության մեջ պաշտպանել ազգային իրավունքները:

Հ. Պարոնյանը երգիծել է ազգային կեղծ գործիչներին, Ազգային ժողովի պատգամավորներին: Նրա և «Մեղվի» պայքարը արևմտահայ հետադիմական ուժերի դեմ թեժացել է 1873 թ. պատրիարք Մկրտիչ Խրիմյանին սատարելու և գաղափարական հակառակորդներից նրան պաշտպանելու առնչությամբ: Պատրիարք Խրիմյանը փորձում էր որոշակի փոփոխությունների ենթարկել Սահմանադրությունը: Բուն արևմտահայ գավառում Սահմանադրության կիրառության փոփոխություններով նա ցանկանում էր բարելավել ժողովրդի սոցիալ-տնտեսական և իրավագուրկ վիճակը: Հետևանքն այն էր, որ «Մեղուն» 1873 թ. հունվարի 18-ից սկսած՝ 2 ամսով չի հրատարակվում: «Մեղուն», սակայն, շարունակում էր երգիծանքով բանավիճել հակախրիմյանական ուժերի և նրանց խոսափողը դարձած պարբերականների («Հայրենիք», «Օրագիր», «Փունջ», «Ասիա») հետ:

«ԹԱՏՐՈՆ» (1874-1877 թթ.)

«Թատրոն» երգիծաթերթը հրատարակվել է 1874-1877 թթ.: Հիմնադիրը և խմբագիրը Հակոբ Պարոնյանն էր, ով երգիծանքի անգերազանցելի վարպետ խմբագրի փորձ ուներ արդեն: «Մեղուն» խմբագրելուց առաջ նա աշխատակցել էր «Փող արարատյան» թերթին, հետո խմբագրել էր «Եփրատ» պարբերականը: Պարոնյանը մինչև 1888 թ. խմբագրել էր մի շարք պարբերականներ («Թիաթրո» արաբատառ թուրքերեն հանդեսը (1874-1875 թթ.), «Թատրոն բարեկամ մանկանց» մանկական ամսագիրը (1876 թ.), «Լույս» (1879 թ.) և «Ծիծաղ» (1883 թ.) երգիծաթերթերը, «Խիկար» երգիծական պարբերականը (1884-1888 թթ.):

«Թատրոնը» գաղափարական և իմաստային առումներով կարելի է համարել Հ. Պարոնյանի «Մեղվի» շարունակությունը:

«Թատրոնում» գերակշռում էր Պարոնյանի քաղաքական երգիծանքը: Այն հայ քաղաքական երգիծանքի բարձրակետն է: Այստեղ նա շարունակել է երգիծել թուրքական բռնապետության ներքին և արտաքին քաղաքականությունը, արևմտահայ կյանքի խոցելի երևույթները, ազգային կառույցների աշխատանքում նկատվող թերությունները և անբարեխիղճ ու հոգևորականին անհարիր կեցվածք ունեցող եկեղեցականներին, ապազգային պահվածքով աչքի ընկնող արևմտահայ գործիչներին:

«Թատրոնում» Հ. Պարոնյանի երգիծանքն առավել սուր շեշտադրումներ ուներ: Բնորոշ են ազգային գործիչների և հոգևորականների՝ սուր երգիծանքով ստեղծված դիմանկարների շարքերը, որոնք Պարոնյանն ամբողջական է դարձրել «Լույս» պարբերականում, ապա դրանք զետեղել ու հրապարակել է առանձին «Ազգային ջոջեր» գրքույկով: Այդ երգիծական դիմանկարները գեղարվեստական և պատմական արժեք ունեն:

«Թատրոնում» Հ. Պարոնյանը երգիծանքի միջոցով բացահայտել է ոչ միայն արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքի, այլև Օսմանյան Թուրքիայի ազգային քաղաքականության ծայրերը: Նա ներկայացրել է Ազգային ժողովի, սահմանադրական մարմինների անպտուղ գործունեությունը: Անդրադարձել է պետական բռնաճնշումներին ու հարստահարություններին:

Հ. Պարոնյանը «Թատրոն» պարբերականում մի կողմից՝ բարձրացնում էր Արևմտահայաստանում բարենորոգումների միջոցով ժողովրդի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի բարելավման և կենսապահովության խնդիրները, մյուս կողմից՝ զարգացնում էր տիրող իրավիճակի դեմ պայքարելու, սեփական ուժերին ապավինելու, միասնաբար գործելու և պաշտպանվելու գաղափարը:

Երգիծաթերթը կոնկրետ փաստերի հիման վրա պատկերացում էր տալիս, թե ինչպես հայրենիքում հայր չունեի ինչքի, գույքի, պատվի, արժանապատվության ապահովություն, իսկ թուրքական կառավարությունը շարունակում էր հայասպան քաղաքականությունը:

«Թատրոնը» պետական կամ ազգային մարմինների ճնշումների հետևանքով պարբերաբար կարճ ժամանակով չէր հրատարակվում:

1876 թ. գրաքննության խստացումը անհետևանք չէր նաև «Թատրոնի» համար: 1877 թ. սկզբներին արգելվում է այստեղ տպագրել քաղաքական ենթատեքստ ունեցող «Կսմիթներ» շարքը, իսկ արդեն հունիս ամսին երգիծաթերթը փակվում է:

«ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆ»

(1896-1914 թթ.)

20-րդ դարասկզբին (1900-1908 թթ.) արևմտահայ մամուլը շարունակում էր գտնվել թուրքական գրաքննության ամենօրյա հսկողության տակ: Պարբերականները հրատարակում էին հիմնականում լուրեր Թուրքիայի և արտերկրի մշակութային, միջազգային կյանքից՝ նախընտրելով գրական-մշակութային ուղղվածությունը, խուսափելով արձարձել ազգային-քաղաքական հիմնահարցեր և չկարողանալով որևէ կերպ քննադատել երկրում տիրող դրությունը:

Թուրքական գրաքննությունը թուլանում է 1908 թ. երիտթուրքական իշխանության հաստատումից հետո:

1908-1915 թթ. արևմտահայ մամուլը ստանձնում է հասարակական կարծիքի արտահայտման, ձևավորման և դրա վրա ներազդելու գործառույթները:

Ադանայի կոտորածից (1909 թ.) հետո արևմտահայ պարբերականները, խորամուխ լինելով կատարվածի դրդապատճառների և կազմակերպիչների հայտնաբերման, մեղավորների չպատժման ու հարակից հարցերի մեջ, սկսում են հասկանալ իթթիհատական կառավարության մտադրությունները հայության ճակատագրի հանդեպ: Հայ մամուլի էջերում հնչում են խիստ գնահատականներ թուրքական իրար հաջորդող իշխանությունների ծրագրավորած հայաջինջ քաղաքականության հասցեին: Արևմտահայ պարբերականներն անդրադառնում են Հայկական հարցին և Բարենորոգումների անցկացման խնդրին, դրա հետ կապված, միջազգային քննարկումներին, երկրի քաղաքական կյանքում հայ տարրի չեզոքացմանը և Օսմանյան խորհրդարանական ընտրություններում արևմտահայության ձայնը անլսելի դարձնելու թուրքերի ցանկությամբ:

1914-1915 թթ. արևմտահայ պարբերականների հրապարակումները պատկերացում են տալիս այն մասին, որ մի կողմից՝ իշխանությունները շարունակական էին դարձնում հայությանը հայրենիքից վտարելու իրենց քաղաքականությունը, մյուս կողմից՝ կրթա-

կան-մշակութային զարթոնք ապրող արևմտահայությունը, հանձին իր քաղաքական կուսակցությունների և ազգային կառույցների ղեկավար գործիչների, չէր կարողանում սթափ գնահատել իրավիճակը, ընտրել ազգափրկության ճշմարիտ ճանապարհ:

Այս ճակատագրական ժամանակաշրջանում է (1896-1914 թթ.) լույս տեսել «Բյուզանդիոնը»: Օրաթերթի խմբագիրները նախ՝ Բյուզանդ և Պարույր Քեչյաններն էին, ապա՝ Արշակ Ալպոյաճյանը:

«Բյուզանդիոնը» ազգային, գրական և գիտական բովանդակություն ունեցող պարբերական էր: Պարբերականի էջերում հանդես են եկել հայ անվանի մտավորականները:

Օրաթերթը հրատարակության 6 տարվա ընթացքում իր վարած մշակութային քաղաքականության շնորհիվ նպաստել է արևմտահայ գրականության զարգացմանը: «Բյուզանդիոնը» գրաքննադատական հոդվածների ու վերլուծականների միջոցով ընթերցողներին ծանոթացրել է եվրոպական գրականության լավագույն արժեքներին, գրականագիտական նոր ուղղություններին ու մշակույթի զարգացման միտումներին:

1894-1896 թթ. Աբդուլ Համիդի նախաձեռնած արևմտահայերի կոտորածից ու ջարդից հետո մինչև 1900-ական թվականները «Բյուզանդիոնը» արձարձում էր բնօրրանից արտագաղթած կամ աքսորված հայության ճակատագրին, նրանց վերադարձին ու ապագային առնչվող հարցեր, ազգային կառույցների և մարմինների վերականգնմանն ու աշխատանքի կանոնավորմանը, ազգային կրթօջախների բարեկարգմանը և հային հայրենիքում պահելու, Արևմտահայաստանի բարենորոգումներին վերաբերող հարցադրումներ ու առաջարկներ:

«Բյուզանդիոնը»՝ որպես ազգային համակարգող մարմին, տեսնում էր հայ եկեղեցուն և Պատրիարքարանին: Պաշտպանում էր պատրիարք Մաղաքիա Օրմանյանի որդեգրած պահվածքը և ուղեգիծը:

Օրաթերթը գաղթականների ու պանդուխտների վիճակը նկարագրելուց և հայրենի տուն վերադարձի կոչով դիմելուց հետո թուր-

քական իրականությունը հայության համար ոչ վնասակար էր համարում: Բ. Քեչյանը արևմտահայության պանդխտության պատճառների շարքում առաջնային էր համարում նրանց տնտեսական ծանր կացությունը ու փորձում էր վերլուծական և ուսուցանող հոդվածների միջոցով նպաստել բուն գավառի ժողովրդի երկրագործական, այգեգործական գիտելիքների մեծացմանը, այդ ոլորտներում եղած նոր մեթոդների ու ձևերի մասին տեղեկատվության մատուցմանը: Նա առաջարկում էր օգտվել փոխգործակցության ձևերից: Բ. Քեչյանը կողմ էր շուկայական հարաբերություններին ու ազատ մրցակցության զարգացմանը:

1908 թ. խմբագիրը կարծում էր, որ Օսմանյան Թուրքիայում քաղաքական կառավարման կարգը փոխվելու է դեպի լավը, իսկ Արևմտահայաստանում հնարավոր է անցկացվեն բարենորոգումներ: 1909 թ. ապրիլին Ադանայում հայության կոտորածից հետո Բ. Քեչյանն արդեն պնդում էր, որ կատարվածի պատասխանատուն երիտթուրքական կառավարությունն է: Թերթը այս խնդրում իր մոտեցումները ներկայացրել է հոդվածների, վերլուծականների, Ադանայից բերված կամ ստացված թղթակցությունների ու նամակների միջոցով: Դրանք վավերագրերի արժեք ունեն:

«Բյուզանդիոնը» Բ. Քեչյանի գլխավորությամբ քարոզչական պայքարում աջակցում էր ռամկավար սահմանադրականներին, որոնք հույսեր էին կապում թուրքական մեկ այլ՝ Իթթիհատին հակադրվող Իթիլաֆ կուսակցության քաղաքական ուղեգծի հետ:

Թերթին մտահոգում էր այն, որ արևմտահայ քաղաքական ուժերը և կուսակցությունները չէին կարողանում հասկանալ թուրքական կառավարող վերնախավի մտադրությունները Հայկական հարցում:

«Բյուզանդիոնը» Արևմտահայաստանի ինքնավարության և Հայկական հարցում օտար պետությունների միջամտության հարցեր չէր բարձրացնում, այլ բավարարվում էր Արևմտյան Հայաստանում 1878 թ. Բեռլինի վեհաժողովի և 1895 թ. բարենորոգումների ծրագրի իրագործման պահանջով:

«ԱԶԱՏԱՄԱՐՏ» (1909 -1915 թթ.)

1909 թ. հունիսի 10 (23)-ին Կ. Պոլսում սկսեց լույս տեսնել ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի պաշտոնաթերթը «Ազատամարտ» օրաթերթը, որի վերջին՝ 1815-րդ համարը բռնագրավվեց 1915 թ. ապրիլի 11 (24)-ին:

«Ազատամարտի» արտոնատերը, պատասխանատու տնօրենն ու խմբագիրն էր արևմտահայ անվանի հասարակական-քաղաքական գործիչ, արձակագիր Ռուբեն Զարդարյանը: Այդ տարիներին ՀՅԴ Արևմտյան Բյուրոն խոհեմաբար է վարվել՝ «Ազատամարտի» խմբագիր ընտրելով Ռ. Զարդարյանին, քանզի հիմնականում նրա շնորհիվ այն չի վերածվել նեղ-կուսակցական թերթի:

«Ազատամարտի» վարչական հոգսերով զբաղվել են Կարապետ Փաշայանը, Սարգիս Օհանջանյանը (Ֆարհատը) և Հայկ Թիրյաքյանը (Հրաչը): Վերջինս՝ մինչև թերթի փակման օրը: Խմբագրական քարտուղարությունը հաջորդաբար ստանձնել են Գեղամ Բարսեղյանը, Շավարշ Միսաքյանը, Հակոբ Սիրունին: Թերթի հիմնական աշխատակիցներն էին Խաչատուր Մալումյանը (Է. Ակնունին), Հարություն Շահրիկյանը (Ատոմը), Գեղամ Բարսեղյանը, Բարսեղ Շահբազը, Գասպար Իփեքյանը, Ներսես Փափագյանը: Աշխատակազմը պարբերաբար փոխվել է:

«Ազատամարտն» ունեցել է 6 անդամից բաղկացած խմբագրական մարմին, որոնք վարչության 3 անդամների հետ ղեկավարել են պաշտոնաթերթը: Կային թարգմանիչներ, լրաբերներ ու թղթակիցներ (այդ թվում՝ արտահաստիքային) Թուրքիայի, Արևմտյան Հայաստանի և աշխարհի տարբեր մասերում: 1909 թ. թերթն ունեցել է սեփական թղթակիցներ Պոլվդիվում, Ատաբազարում, Պարտիզակում, Օրդուում, Քյոթահիայում, Իզմիրում, Ռոդոսթյում, Սամսոնում, Արմաշում և այլուր:

«Ազատամարտի» էջերում հանդես է եկել հայ մտավորականության սերունդը՝ Գր. Ջոհրապը, Դ. Վարուժանը, Միամանթոն, Ավ. Իսահակյանը, Ռ. Սևակը, Ա. Ահարոնյանը, Զ. Եսայանը, Գ. Տեր-Կարապետյանը, Գ. Խաժակը, Ա. Վռամյանը, Մ. Կյուրճյանը, Մ. Վարանդյանը, Լ. Շանթը և ուրիշներ: Օրաթերթը նպաստել է հայրենի գրականության զարգացմանն ու հայ գիրը հասցրել է Արևմտյան Հայաստանի ամենախուլ անկյունները՝ երբեմն որպես դասագիրք օգտագործվելով հեռավոր գյուղերում:

«Ազատամարտը» հրատարակվել է նաև այլ անուններով՝ «Առաջամարտ» (1912 թ.), «Բյութանիա» (1912-1913 թթ.), «Ազդակ» (1912-1913 թթ.), «Բազին» (1912 թ.), «Մեղու» (1913 թ.), «Շանթ» (1913-1914 թթ.), «Ճակատամարտ» (1914 թ.):

Խմբագրության շենքից 1915 թ. ապրիլի 24-ի կեսգիշերին ձերբակալել և բանտարկել են «Ազատամարտի» վերջին (թիվ 1815)՝ այդպես էլ լույս չտեսած համարի վրա աշխատող հերթապահ խմբագրին, գրաշարին, մեքենավարին, բեռնակրին ու դոնապանին: Թերթի մնացած աշխատակիցներին (գրեթե բոլորին) ձերբակալել են իրենց բնակարաններում: Նրանց ճակատագիրն արդեն կանխորոշված էր. նահատակություն մնացյալի հետ: Ձերբակալվածների ու նահատակվածների թվում էր նաև Ռ. Զարդարյանը: 1915 թ. մարտին նա հրաժարվել էր հեռանալ Կ. Պոլսից արտերկիր՝ փրկելու իր կյանքը:

«Ազատամարտի» տեսադաշտից չի վրիպել որևէ հրատապ հարց: Թերթը վերլուծել է Օսմանյան խորհրդարանի, կառավարության աշխատանքները՝ հանդես գալով կառուցողական առաջարկներով, հատկապես՝ երբ խոսքը վերաբերում էր հայ պատգամավորների գործունեությանը:

«Ազատամարտի» հավաքածուներում կար կայուն խորագիր. «Օսմանյան խորհրդարանի նիստերի դահլիճից հաղորդում են...»: Այնտեղ ներկայացվում, վերլուծվում էր յուրաքանչյուր նստաշրջան: Գրեթե բոլոր նիստերում ակտիվորեն մասնակցում էին հայ պատ-

գամավորներից Վարդգեսը (Հովհաննես Մերենկյույան), Գրիգոր Զոհրապն ու Համբարձում Պոյաճյանը (Մուրադ): Առաջարկներով, հարցադրումներով և հարկ եղած դեպքում՝ սուր ելույթներով նրանք «խանգարում» էին մնացած պատգամավորների հանգիստը, ստիպում գործել, մանավանդ երբ խոսքը վերաբերում էր Ադանայի ջարդերի մեղավորներին գտնելուն և պատժելուն: Նրանք չէին սահմանափակվում միայն հայկական խնդիրների վերհանմամբ, այլ շահագրգռված էին ընդհանուր պետական բարեփոխումներով: Զոհրապը «Զանգակի մը տպավորությունները» հոդվածաշարում արտացոլել է Օսմանյան խորհրդարանի թուրք երեսփոխանների վերաբերմունքն իրենց պահվածքի նկատմամբ:

«Ազատամարտն» անդրադարձել է արևմտահայերի ներքին կյանքի խնդիրներին, Ազգային խորհրդի, Պատրիարքարանի կողմից իրականացվող ծրագրերին, նաև՝ համահայկական հիմնահարցերին: Ըստ թերթի՝ ազգային վարչական մեքենայի կենտրոնական ու գավառական մարմինների անդամները սովորաբար ընտրվում էին պատահականությամբ: Նրանց մեջ չէին լինում որոշակի ծրագրեր ունեցող խմբակցությունների ներկայացուցիչներ, որոնք իրենց գործունեության ընթացքում պիտի աշխատեին իրականացնել այս կամ այն ծրագիրը: Ուստի Ազգային ժողովի գործունեությունը գնահատվում էր ամուլ: Եվ դա այնպիսի ժամանակահատվածում, երբ 1911 թ. վերջերից սկսած՝ ուժեղացել էր հայահալած քաղաքականությունը, և կարիք էր զգացվում ազգային ուժերը համախմբելու և միասնականորեն պայքարելու: «Ազատամարտը» ողջունել է դրական տեղաշարժերն այս ոլորտում: Թերթում անդրադարձ կա 1912 թ. օգոստոս-սեպտեմբերյան հայկական ջարդերը կանխելու մտահոգությամբ գումարված Ազգային ժողովի նիստին և հաջորդող դեպքերին, պատրիարքի ու Ազգային ժողովի վարչության հրաժարականներին:

«Ազատամարտը» դրական է գնահատել 1912 թ. հունվարի 21-ին Ազգային ժողովի մեծամասնության ընդունած որոշումը, որով ազ-

գային կյանքում այլևս մեծ դեր էր հատկացվում կուսակցություններին:

«Ազատամարտը» բարձրացնում էր հայեցի դաստիարակության և ազգային կրթության հարցերը, պատկերացում էր տալիս Թուրքիայում իրականացվող պետական կրթական քաղաքականության մասին: Կառավարությունը ոչ միայն չէր աջակցում հայկական դպրոցների բարեկարգման գործընթացին, այլև ամեն կերպ խանգարում էր դրանց բնականոն աշխատանքներին: Թերթն այս երևույթը որակում էր որպես հայկական վարժարանների ներքին ինքնավարության խախտման պետական ծրագիր և գտնում էր, որ կրթական բարեփոխման համար պիտի շահագրգռված լինեին եթե ոչ պետական մարմինները, ապա՝ արևմտահայերը, մասնավորապես ծնողները՝ հարկադրելով թաղական խորհուրդներին գործ անել:

1912 թ. կեսերին «Ազատամարտը» գրում էր, որ Ադանայի ջարդերից հետո հայ ժողովրդի ապահովությունը երբեք այսքան լուրջ վտանգի և սպառնալիքի տակ չէր գտնվել: 1909 թ. գրեթե բոլոր համարներում թերթն անդրադարձել է Ադանայի կոտորածին, քննիչ հանձնաժողովների գործունեությանը, նրանց կազմած զեկուցագրերին և ՀՅԴ-ի դիրքորոշմանն այս խնդրում: Հատուկ խորագրեր էին հատկացվել ջարդերի վերլուծություններին (ասենք՝ «Նոր տեղեկություններ Կիլիկիայեն»): Տպագրվում էին լուրեր Ադանայից, նաև՝ Ադանա, Թարսուս, Մերսին, Դյորթյոլ քաղաքներում ՀՅԴ բժշկական և փաստաբանական մասնախմբերի զեկուցագրերը: Դրանք ահագանգում էին կատարված ոճիրների, եղեռնից փրկվածների անմիջապես կացության մասին: Թերթը 1909 թ. թիվ 25-ի «Անարդար վճիռներ» խմբագրականում կառավարությունից պահանջում էր պաշտոնական զեկուցագրով հերքել զինվորական ատյանի տեղեկագիրը և սկսել դատական գործընթաց՝ իրական մեղավորներին պատժելու նպատակով:

Ադանայի դեպքերից հետո ընթերցողների համար այլևս սովորական էին հայկական գավառներից ստացվող բռնարարքների

մասին պատմող տեղեկատվությունները: Առանձնացվել էին «Խապ-րիկներ երկրեն», «Բռնապետական արարք» հատուկ խորագրերը:

Կիլիկիայի ողբերգական դեպքերից հետո անգամ «Ազատա-մարտը» չէր դնում արևմտահայերի անկախանալու խնդիրը: Այս դիրքորոշումը բացատրվում էր նրանով, որ որպես ՀՅԴ-ի պաշտո-նաթերթ, թերթն իբրև նվազագույն պահանջ առաջադրում էր Արևմտյան Հայաստանի ներքին ինքնավարության խնդիրը Օսման-յան պետության կազմում: Թերթն ուզում էր ապահովել արևմտա-հայերի գեթ ներքին կյանքի կարգավորման հնարավորությունները:

1912 թ. նոյեմբերից սկսած՝ «Ազատամարտը» մշտապես անդ-րադառնում էր Հայկական հարցին և այդ անունով բաժին էր բացել, որտեղ նաև տվյալ խնդրին առնչվող հոդվածների, հրապարակում-ների պատճառով պարբերաբար կամ դատի էր տրվում, կամ փակ-վում էր իշխանությունների հրամանով, կամ փոխում էր սեփական անվանումը: 1912 թ. դեկտեմբերի կեսերից ամեն համարում վերլուծ-վում էր Թուրքիայի ներքին գործերի նախարարության՝ հայկական 4 նահանգների բարենորոգումների համար կազմած նախագիծը: Թերթն այն համարում էր մակերեսային փաստաթուղթ: Նշվում էր, որ խմբագրակազմը պաշտպանում էր հայկական նահանգների բա-րեկարգման անհրաժեշտությունը՝ դրա տակ հասկանալով լուրջ, արմատական ձեռնարկ, որը պիտի բարգավաճման առաջնորդեր տեղի բնակչությանը: Սակայն վստահ չէր, որ Թուրքիայում կիրա-կանանա հայկական բարենորոգումների որևէ նախագիծ կամ ծրագիր:

«Ազատամարտը» ընթերցողների կողմից սիրված ու գնահատ-ված թերթ էր՝ ուրույն դիմագծով: Իբրև ՀՅԴ-ի պաշտոնաթերթ, այն գտնվում էր կառավարական շրջանների ուշադրության կենտրո-նում: Թուրքական թերթերը հաճախ էին թարգմանաբար արտա-տպում «Ազատամարտի» խմբագրականները: Թուրք հասարակու-թյանը թերթի տեսակետերին ծանոթացնելու նպատակով 1911 թ. թիվ 525-ից բացվում է թուրքերենով բաժին: Այդտեղ տպագրվում էին

«Ազատամարտի» նախորդող օրվա խմբագրականները, կարևոր հրապարակումներից մեկն ու մեկը, թուրքերին հետաքրքրող լուրեր և այլն: Օրաթերթին բաժանորդագրվել են բազմաթիվ այլազգիներ, հատկապես թուրք բարձրաստիճան պաշտոնյաները, պալատական ապարատի անդամները, որոնց ուղարկվող օրինակները տպագրվում էին ավելի որակյալ թղթի վրա:

Թերթի օպերատիվությունն ու բազմակարծությունն ապահովելու ունակությունները նպաստել են հայ և օտարազգի ընթերցողների լայն շրջանակ ձևավորելու գործին: Հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո առավել ուժգնացած թուրքական գրաքննության պայմաններում, ձեռք բերելով իր թղթակիցներին ռազմաճակատ ուղարկելու բացառիկ թույլտվություն, «Ազատամարտը» նրանց թղթակցությունների կամ եվրոպական առաջադեմ թերթերից քաղած տեղեկատվության միջոցով կարողացել է ապահովել ամենօրյա լրատվություն:

Թերթը հիմնել է ազատամարտյան ինքնատիպ լրագրության դպրոց, որի դասերը ուսանելի են նաև այսօր: Անգամ ցեղասպանության ընթացքում, օրաթերթի խմբագրին ու աշխատակազմի լավագույն մասին կորցնելուց հետո, «Ազատամարտի» սերունդը շարունակեց կիսատ մնացած ծրագրերն ու անելիքները՝ Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի (1918-1924 թթ.) միջոցով:

«ԱԶԱՏԱՄԱՐՏ» ԳՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ (1910-1913 թթ.)

«Ազատամարտ» օրաթերթը հրատարակության տարիներին (1909-1915 թթ.) գրեթե բոլոր համարներում լուսաբանել է հայկական և համաշխարհային մշակութային անցուղարձը: Թերթի էջերում իրենց ստեղծագործություններով հանդես են եկել ոչ միայն արևմտահայ ու արևելահայ, այլև օտարազգի գրողներն ու արվեստագետները: Օրաթերթը հատկապես գրական-մշակութային ոլորտի անդրադարձներով է զերծ մնացել նեղ-կուսակցական թերթերին բնորոշ հատկանիշներից: Մշակութային ուղղվածությամբ նյութերով, վերլուծական հոդվածներով, ուսումնասիրություններով հարուստ են «Ազատամարտի» տարեմուտյան կամ Կադանդի առիթով հրատարակված բացառիկ համարները, որոնք լույս են տեսել 4-ի փոխարեն 8 էջով:

1910 թ. հուլիսի 10-ին «Ազատամարտի» գրական հավելվածի առաջին խմբագրականում Ռ. Զարդարյանը գրում էր, թե հասել է գրական հերկի ժամանակը: «Ազատամարտը» ցանկանում էր դառնալ գրական օջախ: Այն փորձել է կամրջել պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդի միմյանցից զատված հատվածների գրականության և արվեստի աշխարհի ներկայացուցիչներին: Օրաթերթում տպագրվել են Բաֆֆու, Ավ. Ահարոնյանի, Ալ. Շիրվանզադեի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Հ. Օշականի, Կ. Զարյանի, Սիամանյոյի, Դ. Վարուժանի, Գ. Զոհրապի, Ռ. Զարդարյանի, Զ. Եսայանի, Հ. Նազարյանցի և այլոց գրական չափածո և արձակ երկերը:

«Ազատամարտը» անգնահատելի է համարել արվեստի և մշակույթի դաստիարակիչ դերը ժողովրդի կյանքում: Այդ հանգամանքով էր պատճառաբանվում մշակութային ոլորտի լուսաբանման՝ օրաթերթի որդեգրած ուղեգիծը: Այն մշտապես ուշադրության կենտրոնում է պահել արվեստի բնագավառի հիմնախնդիրները, կատարվող տեղաշարժերը, գրական ու մշակութային քննարկում-

ները, բանավեճերը և ասուլիսները: Այս տեսակետից «Ազատամարտը» կարելի է համարել ժամանակի արևմտահայ մշակութային կյանքի յուրատեսակ հանրագիտարան: Թերթն ապահովել է բազմակարծություն բանավիճային հարցերում: Հարկ է հիշատակել 1913 թ. արևմտահայ իրականության մեջ ծավալված բուռն քննարկումները հայ գրականության զարգացման ուղիների և գրական ոճերի ընտրության առումով: Կազմակերպված գրական ասուլիսներն իրենց անդրադարձն են գտել 1913 թ. վերլուծական հոդվածների, լուրերի և գրախոսականների բաժիններում:

«Ազատամարտ» գրական, գիտական և գեղարվեստական շաբաթաթերթ-հավելվածը լույս է տեսել մինչև 1913 թ. սկզբները: 1911-1912 թթ. այն տպագրվել է «Բագին» և «Բամբիո» անուններով: Լույս է տեսել գրական հավելվածի 73 համար: Խմբագրել են Ռ. Զարդարյանը, Ռ. Դարբինյանը և Շ. Միսաքյանը:

Օտարագգի գրողներից ամսագրի «Օտար էջեր» բաժնում զետեղված են Լ. Տոլստոյի արձակ երկերից, իտալացի բանաստեղծներ Զան Պիետրո Լուչինիի, Պաոլո Փուձիի և Էնրիկո Կարտիլեի, բելգիացի բանաստեղծ Ֆրանսուա Լեոնայի, ֆրանսիացի բանաստեղծ Պիեռ Քիյառի և ուրիշների բանաստեղծությունները:

«Ազատամարտ» գրական ամսագրի «Էջեր թուրք նոր գրականութենեն» խորագրի ներքո տպագրված են թուրք ժամանակակից գրողների ստեղծագործություններից:

Գրական հավելվածի «Միտք և արվեստ» բաժնում նորահրատարակ գրքերի ու ստեղծագործությունների մասին վերլուծական հոդվածներով հանդես են եկել թե՛ ամսագրի աշխատակիցները, թե՛ հայ և օտարագգի գրողներն ու գրաքննադատները: Նրանցից շատերն ամսագրի էջերում իրենց տեսակետներն ու մոտեցումներն են արտահայտել արվեստի ու գիտության տարբեր բնագավառների, այդ թվում՝ գրականության դերի և տարաբնույթ խնդիրների վերաբերյալ:

Ռուսական և եվրոպական գրական ամսագրերից ու թերթերից «Ազատամարտի» գրական հավելվածում թարգմանաբար տպագրել են նշված ոլորտների վերաբերյալ վերլուծականներ: Դրանք առավել հաճախ ամփոփվում էին «Մտավորական շարժում» բաժնում և խմբագրությանն ուղարկված նամակների մեջ:

«Միտք և արվեստ», «Արձագանքներ» բաժիններում տպագրվել են արտերկրի գրական-մշակութային, գիտության ոլորտներին առնչվող ու խմբագրակազմի կարծիքով հետաքրքիր և ուսանելի լուրեր: Այդ լրահոսն, օրինակ՝ ընթերցողներին տեղեկացնում էր ֆրանսիացի բանաստեղծ, հայ դատի պաշտպան Պյեռ Քիյառի մահվան գույժը, կամ ամսագիրը հայտնում էր, որ 1911 թ. հունվարի 14-ին Փարիզում տեղի է ունենալու Պոլ Վերլենի մահվան տարելիցին նվիրված միջոցառում:

Ուշագրավ են հավելվածում ծավալված քննարկումները արևմտահայ գրականության ընթացիկ վիճակի, գրական խմորումների և ուղղությունների, գրականության զարգացման ուղիների վերաբերյալ: Պարբերականին մտահոգում էր ընթերցողների ցածր ճաշակը: Գեղարվեստական ու հասարակական առողջ քննադատության բացակայությունը հանգեցրել էր նրան, որ շեքսպիրների, գյոթենների, հայնենների կողքին հաճախ փառաբանվում էին գաճաճները՝ ստեղծելով ազգային պատկառելի գրականության պատրանք: Շատերն էին համակված գրելացավով, քանի որ գրելը ոչ միայն փառքի ճանապարհ էր, այլև դրամ, պաշտոն ու տաքուկ տեղեր ձեռք բերելու միջոց: Հայ գրական անդաստանում արմատավորված այս բացասական երևույթներից ձերբազատվելու համար հրամայական պահանջ էր դրվում անմիջական հարևանների գրական առաջավոր փորձի հետազոտումը՝ առանց կրկնօրինակման:

«Ազատամարտը» գտնում էր, որ հայ գրականության վերածննդի համար անհրաժեշտ էր ուսումնասիրել արևմտահայ գյուղը՝ արտացոլելով նրա նիստուկացը, վշտերն ու ուրախությունը, հալածանքներն ու նշմարվող ազատագրական պայքարի դրսևորումները:

«ՇԱՆԹ»
(1911-1915 թթ.)
(1918-1919 թթ.)

«Շանթ» հանդեսը լույս է տեսել Կ.Պոլսում 1911-1915 թթ. և 1918-1919 թթ.: Խմբագիրը Մերուժան Պարսամյանն էր: Աշխատակազմում ընդգրկված էին ժամանակի անվանի գրողներն ու հրապարակախոսները՝ Երվանդ Օտյան, Երուխան (Երվանդ Սրմաքեշխանյան), Օննիկ Զիֆթե Սարաֆ, Եղիա Տեմիրճիպաշյան, Զարուհի Գալեմբերյան, Միքայել Շամտանճյան, Մկրտիչ Պարսամյան (Կայծակ), Ժակ Սայապալյան (Փայլակ), Արամ Զարգ (Վտարանդի), Հակոբ Անտոնյան, Շավարշ Միսաքյան, Հակոբ Ճուլյան (Միրունի), Ենովք Արմեն, Արշակ Ալպոյաճյան, Գևորգ Մեսրոպ, Հովհաննես Ասպետ և այլք:

«Շանթը» թղթակիցներ ուներ Ռուսաստանում, Արևմտյան Եվրոպայի երկրներում, ԱՄՆ-ում:

Հանդեսի հիմնական բաժիններն ու խորագրերն էին՝ «Գրական-գեղարվեստական շարժում», «Գրքեր», «Թրքահայ գրականություն», «Մամուլ», «Թարգմանություններ», «Հայ աշխարհ», «Հայ հորիզոններ», «Նամականի», «Լրավիունջ» և այլն:

Պարբերականը հիմնվել էր հայ գրականության զարգացմանը նպաստելու նպատակով: Նրա էջերում պիտի արտացոլվեին հայ արվեստն ու գրականությունը:

Հրատարակության առաջին շրջանում հանդեսն ուներ գրական-գեղարվեստական և գիտական ուղղվածություն:

Կային թեմաներ, որոնց անդրադառնում էին «Շանթի» գրեթե յուրաքանչյուր համարում: Օրինակ՝ «Թրքահայ գրական շարժումը» խորագրի ներքո մշտապես քննարկվում էին արևմտահայ գրականության անցած ուղին, թերություններն ու ձեռքբերումները: Հոդվածներում հաճախ մոտեցումները տարբերվում էին, իսկ երբեմն էլ ծայրահեղորեն հակադիր էին միմյանց: Այս կարգի բանավիճային

հոգվածների շնորհիվ «Շանթը» կարողացել է վերոհիշյալ խնդիրներով մտահոգ մարդկանց համար ստեղծել արտա-հայտվելու հնարավորություն և փորձել է այդ կերպ նպաստել գրականության զարգացմանը: Տարբեր կարծիքների տեր անձինք հանդեսի էջերում պահպանել են կոռեկտությունը և հազվադեպ են մտել անձնական վեճ ու կռիվների մեջ: «Շանթի» ընթերցողներին հենց սա է գրավել:

Արժեքավոր էին «Գրքեր» և «Մամուլ» խորագրերը, որոնցում ներկայացվում, գրախոսվում կամ վերլուծվում էին ժամանակի մամուլի օրգանները և նոր հրատարակված գրքերը: Այստեղ նույնպես ապահովվում էր բազմակարծություն: Նույնիսկ նույն էջում կամ հաջորդական համարներում տպագրվում էին կողմ և դեմ տեսակետներ որևէ գրքի կամ թերթում տպագրված գրական կարևոր հարցեր շոշափող հոգվածների մասին:

«Գրական-գեղարվեստական շարժում» բաժնում գրախոսվում և գրասեր հասարակայնությանն էին ներկայացվում արևմտահայ ու արևելահայ ճանաչված գրողների գրքերն ու ստեղծագործությունները:

Հետաքրքիր ու հանգամանալից վերլուծականներ են Տիգրան Զյոկյուրյանի «Վանքը» վիպակի մասին Փայլակի ծավալուն գրախոսականը, Հ. Զորթյանի գրախոսականը Փայլակի «Հայերը Նիկոմիդիո գավառին մեջ» գրքի առիթով, Մկրտիչ Պարսամյանի «Ով որ սուլթան մը ունի իր հոգիին մեջ» անդրադարձը Ռուբեն Զարդարյանի ստեղծագործություններին և այլն: Դրանք բոլորը զետեղված են «Գրքեր» խորագրի ներքո:

«Գրական-գեղարվեստական շարժում» բաժնում հատուկ ուշադրության են արժանացել Լևոն Շանթի ստեղծագործությունները: Գրաքննադատների գնահատականներում մատնանշվում էին այս գրողի մոտ նկատվող թեմատիկ նորությունները և առկա թերությունները: Հանդեսը գնահատում էր Լ. Շանթի գրելաոճը: Ըստ այդմ՝ նրա մոտ հաջողված էին հոգեբանական նուրբ ու վճիտ վերլուծականները: Լ. Շանթի ստեղծագործությունների և հատկապես «Հին

աստվածներ» դրամայի շուրջ քննարկումները տևական էին արևմուտահայ գրական շրջանակներում: Հնչած կարծիքները փորձել են ամփոփել «Էսայան սանուց միության» կողմից 1913 թ. մարտի 3-ին կազմակերպված գրական ասուլիսում:

Գրական անցուդարձի, նոր հրատարակված գրքերի, գրական մամուլի օրգանների և ընդհանրապես մշակույթի և արվեստի ոլորտների նորությունների մասին լուրեր, թղթակցություններ և թարգմանական նյութեր կան «Շանթ» հանդեսի «Հայ հորիզոնեն» բաժնում: Օրինակ՝ 1911 թ. հուլիսի 1-ի համարում ներկայացվում էին անվանի երգիչ Արմենակ Շահմուրադյանի՝ Փարիզում ունեցած հաջողությունը և ֆրանսիական մամուլի անդրադարձը այդ կապակցությամբ, նաև՝ Թիֆլիսում Ալեքսանդր Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյա հոբելյանին նվիրված միջոցառման մանրամասները, Ղազարոս Աղայանի մահվան գույժը և այլն:

«Հայ հորիզոնեն» բաժնում տպագրված լուրերը հաճախ ծառայում էին վերլուծականներ ու գրախոսականներ գրելուն: Բաժնի «Նոր գրքեր» ենթաբաժնում փոքրիկ գրախոսականներից բացի՝ տպագրում էին նաև լուր-գնահատականներ նորահրատարակ գրքերի մասին:

«Հայ հորիզոնեն» բաժնի լուրերը հաճախ նպաստում էին դրանցում ներկայացվող տեղեկատվությանը համահունչ միջոցառումների անցկացմանը: Ասենք՝ այն մասին լուրերի շնորհիվ, ըստ որոնց՝ 1911 թ. մեծ շուքով հայաբնակ տարբեր վայրերում նշվելու էր Ալեքսանդր Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյակը, արևմտահայ գրական շրջանակում նույնպես պատրաստվում էին անդրադառնալ այդ իրադարձությանը: Տպագրվել և Կ.Պոլսի գրախանութներում վաճառվում էր Ա. Անտոնյանի «Շիրվանզադե» գրքույկը: Տ.Կամսարականի նախաձեռնությամբ հրատարակության էր պատրաստվում գրողի ստեղծագործությունների մասին գրված վերլուծական հոդվածներն ամփոփող ժողովածուն, նաև ընթերցողի դատին էր հանձնվելու Գր.Մալխասի «Շիրվանզադե և իր երկը» աշխատությունը:

«Շանթ» հանդեսի նախաձեռնությամբ սկսում են նշել նաև արևմտահայ գրողների հոբելյանները: Դրանցից առաջինը Կահիրեում տոնված բանաստեղծ Հովհաննես Մեթյանի գրական գործունեության 30-ամյա հոբելյանն էր: Պարբերականի համոզմամբ՝ ժամանակն էր, որ ազգը ճանաչեր ու պատվեր իր արժանավոր գավակներին:

«Հայ հորիզոնն» բաժնի միջոցով «Շանթ» հանդեսն ընթերցողներին տեղյակ էր պահում հայրենիքում և արտերկրում հայ արվեստագետների ու մտավորականների նվաճումների և հաջողությունների մասին: 1911 թ. հուլիսի 15-ի համարում այդ կարգի երեք լուր կար: Դրանցից մեկում, հղում անելով արաբական «Էլ-վաթան» օրաթերթին, «Շանթը» հայտնում էր, որ Կոմիտաս վարդապետը Եգիպտոսում իր համերգային հյուրախաղերի ժամանակ մեծ ընդունելություն էր գտել հայ և օտար գեղարվեստասերների կողմից:

Հրատարակության 2-րդ շրջանում (1918-1919 թթ.) «Շանթ» հանդեսի նախկին բաժիններին ավելացել էին նորերը: Դրանք խորհրդանշական էին իրենց անվանումներով՝ «Հայ պանթեոնը», «Վերապրողները», «Մեր մեծ աքսորականները», «Մեր ազգային վերջին մեծ մարտիրոսները», «Դեպի կյանք» և այլն:

1918-1919 թթ. «Շանթը» դարձել էր գրական-քաղաքական և առավելապես հայապահպանության ու ազգի վերածնության խընդիրներ արծարծող հանդես: Դա պատահական չէր և թելադրված էր Թուրքիայի հասարակական-քաղաքական իրավիճակով: Պահպանելով գրական-գեղարվեստական ուղղվածությունը՝ «Շանթը» հետապնդում էր նաև Ցեղասպանությունը վերապրողների կողմից հայ ժողովրդի արյունոտ պատմությունը գրելու, ապրելով՝ մահվանը հաղթելու և քանդված երկիրը վերանորոգելու նպատակները: «Շանթի» աշխատակիցներն առաջնորդվում էին նշված սկզբունքներով՝ հիշելով, թե իրենք գավակներն էին այն սերնդի, որ մեռավ իրենց ապրեցնելու համար, որ կովեց ու հաղթեց:

Առաջին համարներից սկսած՝ հանդեսում տպագրվում էր Միքայել Շամտանճյանի «Իթթիհատի հայաջինջ նուպան» հուշա-

գրությունը, որտեղ նա հոգեբանական վերլուծության էր ենթարկում հայ մտավորականների մարտիրոսագրությունը և իբրև ականատես վկա ներկայացնում էր նրանց աքսորի շրջանը՝ լի տառապանքներով և ապրելու անկոտրում կամքով: Այս շարքը համարում էին «Շանթի» ամենաարժեքավոր գործը:

Հայ մտավորականների գրկանքների և 1915-1918 թթ. նրանց կյանքի ու գործունեության մասին որոշակի պատկերացում էին տալիս «Վերապրողները» և «Մեր տեսակցությունները» բաժիններում տպագրված նյութերը: Մերուժան Պարսամյանը, ով սկզբնապես մտածում էր, թե իրավունք ունե՞ր ապրելու, երբ ընկերների մեծ մասը նահատակվել էր, հետագայում (մինչև 1918 թվականը) հրատարակության է պատրաստում բանաստեղծությունների երկու ժողովածու, մեկ վեպ և հուշագրությունը:

«Շանթի» 1919 թ. ապրիլի 11-ի թիվ 25-26 միացյալ համարն ամբողջությամբ նվիրված է արևմտահայ գրականության նահատակված սերուցքին: «Մեր պանթեոնը» բաժնի հոդվածներում և հուշերում նրանցից յուրաքանչյուրը երևում էր յուրովի, իր խաղացած անփոխարինելի դերով ու տեղով հայ ազգային ու գրական կյանքում: Օրինակ՝ Ա. Ալպոյաճյանը Մ.Կյուրճյանին (Հրանտ) համարում էր ցեղի պատիվն ու փառքը, ով 1880-ական թվականների վերջերին հայ հասարակության համար հայտնություն եղավ պանդուխտների կենցաղը, տառապանքներն ու երազանքները պատկերող իր ստեղծագործություններով: Նա հանրության ուշադրությունը փորձում էր սևեռել պանդուխտների խնդիրների վրա, որոնց լուծման գործում, Մ.Կյուրճյանի համոզմամբ, պատրիարքը և քահանաներն իրենց բաժինը ունեին, ունևորները՝ իրենց պարտավորությունը, երեսփոխանները, ազգային մարմինները՝ իրենց պարտքը: Ա. Արփիարյանն իր հերթին բարձր էր գնահատում 1880-1890-ական թվականների գրական շարժման մեջ Հրանտի կատարած դերը՝ հիշատակելով «Մասիս» շաբաթաթերթում հրատարակված նրա «Պանդուխտներու կյանքեն» շարքը որպես 19-րդ դարի վերջի

արևմտահայ գրական և հասարակական կյանքի կարևոր հիշատակարաններից մեկը: «Շանթը» գտնում էր, թե կա մի ընդհանուր արժանիք, որը միավորում է Մ. Կյուրճյանին, Ռ. Զարդարյանին և մյուս նահատակ մտավորականներին. նրանց անդավաճան և անձնուրաց ազգասիրությունն ու հայրենապաշտությունը:

Հայաստանի վերաշինության և հզորացման գաղափարը արծարծվում էր «Շանթ» հանդեսի 1918-1919 թթ. գրեթե բոլոր համարներում: «Շանթի» կարծիքով՝ Հայաստանի առաջին հանրապետության հիմնումը դարագլուխ էր բացում հայոց պետականության պատմության մեջ:

Ազգային վերածննդի և հայապահպանության խնդիրների արծարծումը «Շանթի» էջերում թեև հրատարակության երկրորդ շրջանում դարձել էր առաջնահերթ, բայց, միևնույն է, հանդեսն իր բնույթով շարունակում էր մնալ գրական-գեղարվեստական: «Շանթը» հավատարիմ էր մնացել բուն առաքելությանը՝ արտացոլել ու վերլուծել հայ և համաշխարհային գրական կյանքը, գեղարվեստի տարբեր ճյուղերի անցուդարձը: Օրինակ՝ 1919 թ. թիվ 18-ի «Հայ հորիզոններ» բաժնում տպագրված տեղեկատվությունը նորակազմ հայ գեղարվեստական միության գործունեության մասին է: Այդ միության հիմնական նպատակներից էր՝ ծանոթացնել քաղաքակիրթ աշխարհին հայ արվեստի դրսևորումներին:

«Նվագահանդեսներ» բաժնում լուսաբանվում էին համերգներն ու երգահանդեսները, մասնավորապես մենահամերգներն ու Սկյուտարի հայ երաժշտական միության հարյուր քսան հոգուց բաղկացած երկսեռ երգչախմբի ելույթները: Ընդ որում, այդ միության և երգչախմբի հիմնադիր-ղեկավարը Կոմիտաս վարդապետի աշակերտ Վարդան Սարգսյանն էր:

«Թատրոն» բաժնում վերլուծվում և ներկայացվում էր Կ. Պոլսի թատերական անցուդարձը, բայց ուշադրության կենտրոնում էին Հայ դրամատիկական ընկերության ներկայացումները՝ թերություններով և արժանիքներով հանդերձ: «Շանթը» կարծում էր, որ երիտա-

սարդ դերասաններից կազմված այս թատերախումբը կարող էր վերստեղծել հայ թատերական կյանքը: Հասարակությանը թատրոնին կապելու համար հանդեսը հայ դրամատիկական ընկերությանը տալիս էր մի շարք խորհուրդներ, ի թիվս որոնց՝ թատերախմբերում ընդգրկել արհեստավարժ դերասանների, ուշադրություն դարձնել բեմական հագուկապին, պարբերաբար թարմացնել ներկայացումների մեջ ընդգրկված երգերն ու պարերը, կապեր հաստատել և շփվել արտերկրի լավագույն թատերախմբերի ու դերասանների հետ, հայ բեմական արվեստը ներկայացնել օտար հանդիսատեսին և այլն: «Շանթի» խորհուրդներից շատերը հընթացս հաշվի են առնվել: Դրանում համոզվում ենք՝ ընթերցելով հանդեսի «Թատրոն» բաժնի վերլուծականները:

«Շանթի» էջերում հանդես էին գալիս ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ և օտարազգի գրողները իրենց ստեղծագործություններով:

Հանդեսն անդրադառնում էր Ցեղասպանությունից հետո օտար ավերում ապաստանած արևմտահայ գրողների գործերին: Օրինակ՝ Էդվարդ Չոբուրյանը «Թրքահայ գրականությունը Կովկասի մեջ գաղթեն ետքը» հոդվածում ներկայացնում էր հայրենիքից տարհանված գրողների հաջողված ստեղծագործությունները:

«Շանթը» իր էջերում կարևոր տեղ էր տալիս երիտասարդ ու տաղանդավոր գրողներին, նաև փորձում էր աջակցել արևմտահայ նահատակ գրողների անտիպ երկերի հայթայթմանը:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԶՄՅՈՒՌՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

«ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՐԱՐԱՏՅԱՆ»

(1840-1878 թթ.)

(1878-1884 թթ.)

«Արշալույս Արարատյան» ամսաթերթը (ամսատետրակը) լույս է տեսել 1840-1884 թթ.: Այն գլխունահայ գաղութի առաջին տպագիր պարբերականն էր: Հիմնադիրն ու խմբագիրը (մինչև 1878 թ.) Ղուկաս Պալղազարյանն էր:

1878-1884 թթ. ամսաթերթը խմբագրել է Հ. Կ. Սըվաճյանը:

Ղ. Պալղազարյանի խմբագրության օրոք «Արշալույս Արարատյանը» արտահայտում էր պահպանողական տեսակետներ:

«Արշալույս Արարատյանը» կարևորում էր ազգային միասնության ու համախմբման, ազգապահպանության և հայրենիքի վերածնության գաղափարները:

Պարբերականը միջազգային իրադարձություններին և արտաքին աշխարհին անդրադառնում էր առավելապես լրաքաղի ձևով և հաղորդումներով՝ դրանք վերցնելով արտասահմանյան մամուլից և թարգմանաբար արտատպելով իր էջերում: Տեղեկությունները քաղում էր Կ. Պոլսում և Օսմանյան Թուրքիայից դուրս հրատարակվող հայերեն և օտարալեզու պարբերականներից: Տպագրում էր նաև սեփական թղթակիցների պատրաստած հոդվածներն ու եզրակացությունները:

«Արշալույս Արարատյանը» ուներ թղթակիցներ թե՛ Թուրքիայի տարբեր անկյուններում, թե՛ տարբեր երկրներում (Եգիպտոսում, Հնդկաստանում, Ռուսաստանում, Պարսկաստանում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Շվեյցարիայում,

Ավստրալիայում): Թղթակիցները լուրեր էին ուղարկում մասնավորապես հայկական համայնքների կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների և միջոցառումների մասին:

Ղ. Պալդազարյանը ներկայացնում էր ազգային ներքին կյանքի անցուդարձը: «Արշալույս Արարատյանի» ամսատետրակներում վավերագրված է զմյուռնահայ գաղթօջախի առօրյան իր մտահոգություններով, խնդիրներով և ձեռքբերումներով:

Հրատարակության երկրորդ շրջանում Հ. Սըվաճյանը թերթը փորձեց տանել անկողմնակալության և մեծահարուստներից անկախ լինելու ճանապարհով: Նրա խմբագրության տարիներին «Արշալույս Արարատյանը» անդրադառնում էր արևմտահայության իրավագուրկ ու անպաշտպան վիճակին՝ թուրքական կառավարությունից պահանջելով օրենքների և Սահմանադրության սկզբունքների ու կետերի կիրառում արևմտահայ գավառում: Թերթը ենթարկվում էր ազգային և թուրքական իշխանությունների հալածանքին: 1884 թ. դատարանի առաջ մեղավոր են ճանաչում Հ. Սըվաճյանին և նրան մեկուսացնում են հանրային գործերից, իսկ «Արշալույս Արարատյանը» դադարում է լույս տեսնել:

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒԼ»

(1871-1901 թթ.)

(1901-1909 թթ.)

«Արևելյան մամուլը» լույս է տեսել 1871-1901 թթ. և 1901-1909 թթ.: Հիմնադիրն ու խմբագիրը Մատթեոս Մամուրյանն էր: Պարբերականի միջոցով խմբագիրն ու նրա շուրջը համախմբված աշխատակիցները, թղթակիցներն ու ժամանակի առաջադեմ մտավորականության լավագույն ներկայացուցիչները ձգտում էին արձագանքել արևմտահայ իրականության էական խնդիրներին և առաջարկում էին հայ ժողովրդի համար Օսմանյան Թուրքիայում ստեղծված իրավիճակից դուրս գալու ճանապարհներ:

«Արևելյան մամուլը» Մ. Մամուրյանի խմբագրության տարիներին փաստում էր այն իրողությունը, որ Արևմտահայաստանում և կոնկրետ Զմյուռնիայում Թանգիմաթը և Սահմանադրությունը չէին կիրառվում: Չնայած Օսմանյան Թուրքիայում օրըստօրե խստացող գրաքննության սահմանափակումներին՝ թերթն անդրադառնում էր Թուրքիայի ազգային քաղաքականությանը: Ներկայացնում էր Զմյուռնիայի Գավառական վարչության այն գործելակերպը, որը պաշտպանում էր միայն մեծահարուստների և ազգային վերնախավի իրավունքներն ու շահերը:

Իր հրապարակախոսությամբ Մ. Մամուրյանը արևմտահայությանը հուզող բարենորոգումների և Հայկական հարցի հետ կապված մտահոգություններ էր արտահայտում: Նա կարծում էր, որ արևմտահայությունը պատրաստ չէ ազգային-ազատագրական պայքարին և երկարատև է լինելու այդ նախապատրաստական փուլը: Մ. Մամուրյանը համարում էր, որ թուրքական լծի դեմ Բալկանյան թերակղզու ժողովուրդների ազատագրական պայքարին արևմտահայերը չէին կարող միանալ, քանզի անպատրաստ էին և արդյունքի չէին հասնելու:

«Արևելյան մամուլը» սոցիալ-տնտեսական ու ազգային խնդիրների լուծումը կապում էր օրենքների կիրառության հետ՝ շրջանցելով և հետագային թողնելով ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությունը: Մ.Մամուրյանի կարծիքով՝ Օսմանյան Թուրքիայի հասարակական ներքին հիմնախնդիրները հնարավոր էր լուծել անարյուն և խաղաղ ճանապարհով՝ պետական բարեփոխումների միջոցով, նաև՝ ժողովրդին լուսավորելու և տնտեսական գիտելիքներով հարստացնելու ճանապարհով: Ազգային ինքնավարության գաղափարը կյանքի կարող էր կոչվել միայն քաղաքական ներքին ու արտաքին նպաստավոր պայմաններ ստեղծվելուց հետո: Մ.Մամուրյանը գտնում էր, որ ազգային-ազատագրական շարժման ծավալումը արևմտահայության համար վտանգավոր է, բացի այդ՝ նա եվրոպական պետությունների և Ռուսաստանի հետ որևէ հույս չէր կապում արևմտահայությանն աջակցելու հարցում: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին Մ.Մամուրյանը որոշակի քաղաքական ծրագրեր էր քննարկում՝ արևմտահայերի վարչական ինքնավարության ձեռքբերման գործում ռուսական զենքի հաղթանակի հետ կապված, բայց այդ հույսերը շուտով մարում են:

Պարբերականում Մ.Մամուրյանը ոչ էական տեղ էր հատկացնում բուն Արևմտահայաստանի հիմնահարցերին, ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր կացության լուսաբանմանը: Հրապարակախոսին ավելի շատ մտահոգում էր այն հարցը, թե ինչպես Օսմանյան պետության մեջ հասնել հայ եկեղեցու և Պատրիարքի գերակա դերին, քանի որ թուրքական պետական ապարատը 1870-ական թվականների վերջերին արդեն անտեսում էր Պատրիարքարանի ազգային ու կրթական իրավասությունները: «Արևելյան մամուլը» ներկայացնում էր նաև Բարձր դռան ազդեցությանը ենթարկվող Ազգային ժողովի երեսփոխաններին՝ Ազգային ժողովը համարելով մեծահարուստների իրավունքները պաշտպանող կառույց:

1880-ական թվականներին Մ. Մամուրյանի համար այլևս պարզ է դառնում, որ Հայկական հարցը թուրքական իշխանությունները

փորձում էին լուծել հայ ժողովրդին հավատափոխ անելու, կոտորելու, հողագրկելու և հայրենիքից դուրս մղելու ճանապարհով: Խրստացված գրաքննության պայմաններում խմբագիրը գրական ստեղծագործությունները «Արևելյան մամուլում» հրապարակելու միջոցով էր փորձում բարձրաձայնել հասարակական հնչեղություն ունեցող խնդիրները: Այդ ստեղծագործություններից շատերը (մասնավորապես բանաստեղծությունները) չունեին գեղարվեստական բարձր արժեք, բայց Մ.Մամուրյանը կարևորում էր սոցիալ-քաղաքական բռնարարքների ու հալածանքների դեմ ուղղված դրանց շեշտադրումները: «Արևելյան մամուլի» շուրջ էին համախմբվել արևմտահայ անվանի գրողներն ու մտավորականները:

Մ.Մամուրյանը իր պարբերականի էջերում թարգմանաբար գետեղում էր նաև եվրոպական և ռուս գրականության լավագույն նմուշները:

«Արևելյան մամուլը» Մ. Մամուրյանի մահվանից հետո՝ 1901-1909 թթ., ունի հրատարակության երկրորդ շրջան: Այդ ժամանակահատվածում պարբերականի խմբագիրն էր Մ. Մամուրյանի որդին՝ Հրանտ Մամուրյանը: 1903-1909 թթ. նա ազգային-գրական ուղղվածություն ունեցող «Արևելյան մամուլը» դարձնում է շաբաթական հանդես:

Հրատարակության երկրորդ շրջանում «Արևելյան մամուլի» հետաքրքրությունների շրջանակներում Զմյուռնիայի հայկական կրթօջախների հիմնահարցերն էին: Պարբերականը ներկայացնում էր զմյուռնահայերի անտարբերությունը կրթական խնդիրների նկատմամբ և գտնում էր, որ կրթադաստիարակչական հիմնահարցերի վերացման գործում կարևոր դեր ունեն Զմյուռնիայի կրթամշակութային միություններն ու ակումբները և ազգային կառույցները, որոնք, սակայն, հանդես չէին բերում անհրաժեշտ հետաքրքրություն:

Ազգային-հասարակական և կրթական հիմնահարցերին անդրադառնալուն զուգընթաց՝ Հ. Մամուրյանը «Արևելյան մամուլի»

Էջերում զգալի տեղ էր հատկացնում արևմտահայ գեղարվեստական գրականության և մշակույթի զարգացման խնդիրներին: 1908 թ. լույս են տեսել բացառապես գրական և գրաքննադատական բովանդակություն ունեցող եռամսյա 3 բացառիկ համարներ՝ որպես «Արևելյան մամուլի» գրական հավելվածներ:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Հ. Մամուրյանի պարբերականը դառնում է Ռամկավար սահմանադրական կուսակցության հրատարակություն:

1908-1909 թթ. «Արևելյան մամուլը» անդրադարձել է երիտթուրքական իշխանությունների հակահայ քաղաքականությանը: Այդ թեման հանդեսում իր բարձրակետին է հասել 1909 թ. ապրիլին Ադանայում իրագործված հայկական կոտորածների շրջանում և դրանից հետո, մինչ հանդեսի հրատարակության դադարեցումը՝ 1909 թ. կեսերին:

«ԴԱՇԻՆՔ» (1909- 1914 թթ.)

«Դաշինքը» լույս է տեսել 1909-1914 թթ.:

Արտոնատերը Հ. Մամուրյանն էր: Խմբագիրներն էին Ս. Պարթևյանը (1909-1911 թթ.), Ա. Պելեքյանը (1911-1913 թթ.), Հ. Մամուրյանը (1913-1914 թթ.):

«Դաշինքը» փոխարինում էր «Արևելյան մամուլ» շաբաթաթերթին:

Այն Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության համակիր հրատարակություն էր: Արտահայտում էր այդ կուսակցության տեսակետները մասնավորապես ազգային խնդիրները միասնաբար լուծելու առումով: «Դաշինքը» դեմ էր ազգային երկպառակություններին և միջկուսակցական անձնավորված պայքարին: Պարբերականը հրատարակվում էր մի ժամանակաշրջանում, երբ Հայկական հարցը մեծ հնչեղություն էր ստացել, իսկ արևմտահայությունը չէր կողմնորոշվում իշխանությունների առաջարկած տարբերակների միջև:

«Դաշինքը» պաշտպանում էր Օսմանյան Թուրքիայում ազգերի իրավահավասարության և ազգային դիմագծի պահպանման տեսակետները: Քանի որ Հայ սահմանադրական ռամկավարները մտահոգված էին առավելապես արևմտահայության գոյատևման և որպես ազգ պահպանման խնդիրներով, բնականաբար «Դաշինքը» նույնպես իր հրապարակումների մեծ մասը նվիրում էր այդ թեմայի լուսաբանմանն ու քննարկմանը: Թերթը ժողովրդին կոչ էր անում ընտրել Թուրքիայում, ի թիվս այլ ժողովուրդների, արևմտահայության խաղաղ գոյակցության և բարենորոգումների ճանապարհը: Երբ Ադանայի կոտորածը և դրան հաջորդող իրադարձությունները Սահմանադրական ռամկավարների համար պարզ են դարձնում իշխանությունների մտադրությունները, «Դաշինքը» դեմ է արտա-

հայտնվում «Իթթիհատ վե թերագգ» կուսակցության գործելակերպին 1910-1911 թթ. տպագրված հոդվածներում և թղթակցություններում:

1913-1914 թթ. «Դաշինքը» լուսաբանում էր արևմտահայերի սոցիալ-տնտեսական կացությունը, ներկայացնում բարենորոգումների հետ կապված՝ հայ ժողովրդի և հայկական կուսակցությունների հույսերը:

«Դաշինքը» Հայկական հարցի լուծումը կապում էր արտաքին ուժերի օգնության հետ: Պարբերականին մտահոգում էր մասնավորապես ՀՅԴ-ի համագործակցությունը Իթթիհատի հետ: Քննադատելով միջկուսակցական կոիվներն ու ազգային անմիաբանությունը՝ «Դաշինքը», սակայն, ինքն էլ է ներքաշվում դրանց մեջ: Թերթը բանավիճում էր դաշնակցական մամուլի օրգանների հետ և պարզաբանում էր ՀՅԴ-ի հետ իր գաղափարական անհամաձայնության պատճառները:

1914 թ. թերթը ենթարկվում է երիտթուրքական կուսակցության՝ արևմտահայության նկատմամբ դրսևորած «բարյացակամության» ազդեցությանը: Դա պայմանավորված էր բարենորոգումների շուրջ ռուս-գերմանական համաձայնագրի առիթով հայերին և միջազգային հանրությանը ևս մեկ անգամ խաբելու հերթական դրսևորմամբ: «Դաշինքը» հույս էր կապում բարենորոգումների խնդրի հետ:

«ԱՇԽԱՏԱՆՔ»

(1910-1915 թթ.)

Իզմիրի «Աշխատանք» պարբերականը լույս է տեսել 1910-1915 թթ.: Տպագրվել է չորեքշաբթի և շաբաթ օրերին «Քեշիշյան» տպարանում:

Հիմնական աշխատակիցներն էին Է. Ակնունին, Ավետիս Ահարոնյանը, Մկրտիչ Պարսամյանը, Մարգալետը, Օննիկը, Մելիք Հովսեփյանը, Խաչքարը, Հ. Համբարձումյանը, Վահե Տիճյանը, Ասպետը, Տարագիրը, Ամիրան և այլք: Տերը և տնօրենը Ս. Թոքաճյանն էր: «Աշխատանքը» ուներ թղթակիցներ և գործակալություններ Կ.Պոլսում, Տարսոնում, Երզնկայում, Տենիզլիում, Էտիրնեում, Գրքագաճում: Հիմնական բաժիններն էին՝ «Ազգային», «Բալկանյան նամականի», «Բալկանյան քրոնիկ», «Մամուլի տեսություն», «Կանանց հարց», «Նամակ խմբագրության», «Նվիրատվություն», «Հեռագիր», «Ստացանք», «Զվարճալիք», «Շնորհակալիք», «Ազդ», «Փոքր ծանուցումներ» և այլն:

«Աշխատանքը» դաշնակցական ուղղվածություն ունեցող կամ ՀՅԴ համակիր մամուլի օրգան էր: Վերլուծականները և ծրագրային հոդվածները զետեղվում էին թերթի երկրորդ էջում որպես խմբագրական:

Ուներ «Թերթոն» բաժինը, որտեղ հատվածաբար տպագրում էին ժամանակի հայ և օտարազգի հայտնի գրողների ստեղծագործությունները:

«Ս. Թոքաճյան գրատուն» բաժինը կայուն տեղ ուներ չորրորդ էջում: Տեղեկացնում էին այդ գրատան ստացած նոր գրքերի մասին՝ ներկայացնելով նաև դրանց գները:

Իզմիրի ներքին խնդիրներն ու հայ համայնքի կյանքի մանրամասներն ամփոփված էին «Աշխատանքի» «Ազգային» բաժնում: Անդրադառնում էին գավառի Ազգային վարչության, Քաղաքական ու Գավառային ժողովներին և Ուսումնական խորհրդի նիստերին:

Չկար որևէ համար (նույնիսկ 1915 թ.), որտեղ խմբագրությունը առնվազն երկու հոդված չնվիրեր կրթական հիմնահարցերին: «Աշխատանքի» համար ռազմավարական նշանակություն ունեին ազգային կրթության և աճող սերնդի հայեցի դաստիարակության խնդիրները: 1915 թ. թերթը կրկին դրանք առաջնային էր համարում:

Ի տարբերություն ժամանակի արևմտահայ այլ պարբերականների, «Աշխատանքը» քննարկում էր ոչ թե ուսուցիչների ցածր աշխատավարձին կամ նյութական անձուկ կացությանն առնչվող խնդիրները, այլ ազգային կյանքում ուսուցիչների դերի ու պատասխանատվության հարցերը: Այս առումով թերթը կարևորում էր ուսուցչական միությունների անհրաժեշտությունը, որոնք պիտի բժշկեին ուսուցիչների բարոյական ու մտավոր վերքերը: «Գավառի ուսուցչության շուրջ» թղթակցության հեղինակ Վահե Տիճյանը տգիտությունը, անսկզբունքայնությունը և կոչմանը անարժանությունն էր համարում գավառի ուսուցիչների արգահատելի դիրքի պատճառները: Ուսուցիչ բառը շատ վայրերում հոմանիշ էր համարվում ստրուկ կամ հալածանքների և գրկանքների առարկա բառերին: «Աշխատանքը» բերում էր փաստեր, երբ ուսուցիչները պատժվում էին իրենց համարձակ պահվածքի համար: Մասնավորապես Իզմիրի վարժարանների ու դպրոցների ծանր վիճակի համար մեղավոր էր համարվում Իզմիրի հոգևոր Առաջնորդ Մատթեոս Ինճյանը, ով ամեն ինչ անում էր, որ կրթօջախներից անձնական շահույթ ունենար:

Թերթը ներկայացնում էր Հռիփսիմյան օրիորդաց վարժարանի ուսուցչուհիների պահվածքը՝ փաստելով, որ Հռիփսիմյանի վարչությունը հանձնված է իգական սեռի դաստիարակության մասին գաղափար չունեցող անձանց: Այնինչ կանանց դաստիարակությունը և կրթությունը, ըստ «Աշխատանքի», այն հիմքն է, որի վրա բարձրանում է ազգի գոյության վերնաշենքը: Թերթն առաջարկում էր ստեղծել խառը կամ երկսեռ վարժարաններ:

Կրթական հիմնախնդիրները կարելի էր վերացնել՝ մշակելով համալիր ծրագիր: «Աշխատանքը» առաջարկում էր կազմել նոր ուսումնական ծրագրեր, գրել նոր դասագրքեր, դասավանդման մեթոդներում և ուսումնական գործընթացում կիրառել ժամանակակից սկզբունքներ: Կրթական հիմնախնդիրների լուծումը կապում էր նաև արևմտահայ գավառի ուսուցիչների աշխատանքային կարճաժամկետ պայմանագրերի հետ:

«Աշխատանքը» չունեւ ընդգծված քաղաքական ուղղվածություն: Այն հայ ժողովրդին կամ, ավելի ճիշտ, իզմիրահայությանը մտահոգող հասարակական-քաղաքական հիմնահարցերին անդրադառնում էր հպանցիկորեն: Չունեւ անգամ խմբագրականներ քաղաքական թեմաներով: Այդ հիմնախնդիրների վերաբերյալ վերլուծական հոդվածներ էր արտատպում «Դրոշակից»: Դրանք մեծ մասամբ նվիրված էին Հայկական և Արևելյան հարցերին: 1913-1914 թթ. «Աշխատանքի» էջերում արևմտահայ գավառից ստացված թղթակցությունների միջոցով ներկայացվում էին մի կողմից՝ տեղեկություններ հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող անօրինական ձեռնարկների, սպանությունների, կոդուպուտի մասին, մյուս կողմից՝ խրախուսվում էին հայության ուժերի միավորմանը միտված ձեռնարկներն ու քայլերը:

«Աշխատանքի» հրապարակումների մեջ առանձնանում են Ռոդոսթոյի աղետը և դրա շուրջ ծավալված քննարկումները: Ռոդոսթոյից ուղարկված թղթակցությունները ներկայացնում էին քաղաքի հայ ազգաբնակչության ջարդի մանրամասները: «Աշխատանքը» օբյեկտիվ պատկերացում տալու նպատակով Ռոդոսթո էր գործուղել Հ. Մ. Համբարձումյանին: Ռոդոսթոյում և Օսմանյան Թուրքիայում հայ ժողովրդի կոտորածները, «Աշխատանքի» համոզմամբ, պետական հատուկ մշակված քաղաքականության բաղադրամասն էին:

Թերթում հատուկ էր «Արտագաղթ» բաժինը: Այս թեմային հիմնականում անդրադառնում էր Մարգպետը: Նա վերլուծում էր արևմտահայերի արտագաղթի պատճառները: Դրանք երկուսն էին՝

քաղաքական և տնտեսական: Հոդվածագրի կարծիքով՝ արտագաղթի տնտեսական պատճառների չեզոքացմանը զուգահեռ՝ անհրաժեշտ էր աշխատել դրա քաղաքական պատճառներն ուսումնասիրելու և վերացնելու ուղղությամբ: Դիմում էր ժողովրդին, որ գործադրեին բոլոր միջոցները արտագաղթից խուսափելու և հայրենիքը չլքելու համար:

«Աշխատանքը» հոդվածներ է տպագրել Թուրքիայի ներքաղաքական լարված հարաբերությունների վերաբերյալ: Անդրադառնալով Բալկանյան թնջուկին՝ թուրք-բուլղարական կամ հույն-թուրքական ռազմական գործողություններին և բանակցային գործընթացներին, «Աշխատանքը» խուսափում էր բացահայտ կերպով ներկայացնել հայ ժողովրդի ակնկալիքները, իսկ եթե խոսում էր դրանց մասին, ապա՝ շատ ընդհանուր ձևով: Թերթը չեզոք էր և չէր պաշտպանում կողմերից որևէ մեկին: Խմբագրակազմը գիտակցում էր, որ թեև Հայկական հարցի լուծման համար նպաստավոր (միևնույն ժամանակ վտանգավոր) պայմաններ էին ստեղծվել, բայց Թուրքիայի կառավարող «Իթթիհատ վե թերազզ» կուսակցությունը չէր հանդուրժում այլախոհությունը և ազգերի ինքնավարությունը: Հայությանը կոչ էր արվում լինել աչալուրջ, որովհետև բարդ գործընթաց էր Հայկական հարցի լուծումը. տարբեր պետություններ այստեղ հետապնդում էին իրենց շահերը:

«Աշխատանքում» ազգային համախմբման անհրաժեշտությունը շեշտվում է 1913 թ. կեսերից սկսած: Այս շրջանում ամենքին մտահոգում էին Օսմանյան հերթական խորհրդարանական ընտրությունները և հայ պատգամավորների թվի հետ կապված հարցերը: Թերթը բացատրում էր ընթերցողներին, որ ճիշտ կվարվեն, եթե ձայն չտան Իթթիհատի կողմից նշանակված հայ թեկնածուներին, քանի որ ընտրվելու դեպքում նրանք կլինեն այդ կուսակցության և ոչ թե հայ ժողովրդի ներկայացուցիչները խորհրդարանում: «Աշխատանքը» հայրենիքը ծանր պահին լքողներին դասալիք էր համարում: Քաղաքական նման հայացքներ ունեցող խմբագրակազմը, պարզ է,

որ 1915 թ. համարներում նույնպես պիտի շարունակեր պնդել, թե հայրենիքը չպիտի լքել, եթե այնտեղից թուրքական իշխանությունները բռնի չեն տեղահանել կամ կոտորել:

1915 թ. վերջին համարներում «Աշխատանքը» արձարծում էր ազգային դիմագիծը չկորցնելու և հայ մնալու հիմնահարցեր:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ ԳԱՎԱՌԱՀԱՅ ՄԱՍՈՒԼ

«ԱՐԾՎԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ»

(1855-1856 թթ.)

(1858-1864 թթ.)

«Արծվի Վասպուրականի» ամսագիրը լույս է տեսել 1855-1856 թթ. և 1858-1864 թթ.: Խմբագիրը Մկրտիչ Խրիմյանն էր:

1855 թ. հունիսից մինչև 1856 թ. հունիսը Կ.Պոլսում լույս է տեսել ամսագրի 12 համար: «Արծվի Վասպուրականին» բուն Արևմտյան Հայաստանում հրատարակված պարբերական է դառնում, երբ Մկրտիչ վարդապետ Խրիմյանը 1856 թ. նշանակվում է Վանի Վարագա վանքի վանահայր՝ ամսագիրը 1858 թ. մարտից տպագրելով այնտեղ:

1858-1864 թթ. «Արծվի Վասպուրականի» հրատարակության երկրորդ շրջանն է: Ընդլայնվում է ամսագրի բաժանորդագրության շրջանակը: 1860 թ. այն տարածվում էր Արևմտահայաստանի որոշ բնակավայրերում: Մեծանում է աշխատակիցների թիվը: Աշխատակազմում ընդգրկված էին հիմնականում 1857 թ. Վարագա վանքում Խրիմյանի հիմնածառանգավորաց վարժարանի սաները և վանքի միաբանության անդամները:

Արևմտահայաստանի առաջին պարբերականը, բնական է, որ պիտի անդրադառնար ժողովրդի սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակին, հալածանքներին, պանդխտության և արտագաղթի թեմաներին: «Արծվի Վասպուրականին» ձգտում էր հրապարակախոսական ու ճանաչողական հոգեվածների միջոցով արևմտահայության հոգում վառ պահել հայրենասիրության կրակը՝ կոչ անելով վերա-

դառնալ հայրենիք: Պարբերականը բացատրում էր, որ հակառակ պարագայում բնօրրանը հայաթափ կլիներ:

Հրատարակության երկրորդ շրջանում ավելի է ուրվագծվում «Արծվի Վասպուրականի» ուղղվածությունը: Այն տպագրում էր ճանաչողական բնույթի հոդվածներ ու նյութեր հայ եկեղեցու և ազգային ու պետական նշանավոր գործիչների ազգանպաստ գործունեության մասին: Դրանով փորձ էր արվում ժամանակակիցների մեջ նրանց նմանվելու և հայոց պետականությունը վերականգնելու նպատակով ազատագրական պայքարի ցանկություն արթնացնել:

1862-1863 թթ. Զեյթունի ապստամբությունը ճնշելուց հետո «Արծվի Վասպուրականին» հավատում էր, որ ազատագրական պայքարը պիտի շարունակվեր և հաղթանակով ավարտվեր: Իսկ մինչ այդ, անհրաժեշտ էր բարենորոգումներ կատարել գավառահայության կյանքում:

«Արծվի Վասպուրականին» փաստերի հիման վրա ցույց էր տալիս, որ արևմտահայ գավառում Ազգային Մահմանադրությունը իրականում չէր գործադրվում ներքին խնդիրները կարգավորելու համար: Գավառահայության ձայնը լսելի չէր նաև Կ. Պոլսի Ազգային ժողովում և Կենտրոնական վարչությունում: Մ. Խրիմյանն առաջարկում էր փոխել այդ իրավիճակը և ուժերը կենտրոնացնել արևմտահայության շահերն ու իրավունքները պաշտպանելու վրա:

«Արծվի Վասպուրականին» հրատարակության համար ընտրում էր այնպիսի գեղարվեստական ստեղծագործություններ ու վանքում պահպանվող ձեռագիր հիշատակարաններից հատվածներ, որոնք համապատասխանում էին իր նպատակներին ու ծրագրին:

1862 թ. Մ. Խրիմյանը Կ.Պոլսի արևմտահայոց Պատրիարքարանի կողմից նշանակվում է Տարոնի հոգևոր Առաջնորդ և Մ.Կարապետ վանքի վանահայր: Նա հեռանում է նոր պաշտոնավայր, դրանից տուժում է ամսագրի տպագրությունը: Նրա հրատարակությունը դադարում է 1864 թ.:

Մեկ տասնամյակ հետո Վարագա վանքում Մանվել Անանյանը կրկին հրատարակում է «Արծվի Վասպուրականին», բայց այս նոր ամսագիրը միայն պահպանել էր նախկին անունը, իսկ գաղափարական և ծրագրային ուղղվածությամբ բոլորովին տարբեր էր խրիմյանական «Արծվի Վասպուրականից»:

«ԱՐԾՎԻԿ ՏԱՐՈՆՈ»

(1863-1865 թթ.)

«Արծվիկ Տարոնո» երկշաբաթաթերթը լույս է տեսել 1863-1865 թթ. Տարոնի Ս. Կարապետ վանքում: Խմբագիրը Գարեգին Սրվանձըտյանցն էր: Պարբերականը «Արծվի Վասպուրականիի» հետ կարևոր դերակատարում ունեցավ Տարոն-Տուրուբերանի և Վասպուրականի ժողովրդի սոցիալ-քաղաքական խնդիրները արծարծելու, դրանց վերաբերյալ հասարակական կարծիք ձևավորելու գործում: Դրանք նպաստեցին արևմտահայության ազգային ինքնագիտակցության բարձրացմանը:

Իր ծրագրային նպատակներն իրագործելու համար Գ. Սըրվանձտյանցը լավ էր նախապատրաստվել. նախապես մշակել էր հոդվածներում բարձրաձայնվելիք թեմաները, առանձնացրել էր բաժինները և խորագրերը, հավաքագրել էր բանիմաց աշխատակիցների:

Պարբերականն ուներ գրական-քաղաքական ուղղվածություն: «Արծվիկ Տարոնոյի» էջերում տպագրվում էին թե՛ աշխատակիցների գրական ստեղծագործությունները և ճամփորդական ակնարկները, թե՛ հայ ժողովրդական բանահյուսության յուրօրինակ ու բացառիկ նմուշները: Տպագրության էին վերցնում միայն փոքրածավալ և պարզ ու մատչելի լեզվով գրված նյութեր, որպեսզի դրանք ընթերցողներին լիովին հասկանալի լինեին և ներագրեին նրանց մտքերի վրա: Իր հրապարակումներով «Արծվիկ Տարոնոն» պատկերացում էր տալիս Տարոնի և Վասպուրականի հայության տնտեսական ծանր և քաղաքական իրավագուրկ վիճակի մասին, ներկայացնում էր աշխատավոր ժողովրդի կրած հարստահարությունները հայ, թուրք և քուրդ մեծահարուստների կողմից:

«Արծվիկ Տարոնոն» ներկայացնում էր ազգային մարմինների և Պատրիարքարանի անբավարար աշխատանքը:

1864 թ. պարբերականը կառավարության որոշմամբ փակվում է: Գ. Սրվանձտյանցի և Մ. Խրիմյանի ջանքերի շնորհիվ մի քանի ամսից վերահրատարակվում է: «Արծվիկ Տարոնոն» շարունակում էր արծարծել արևմտահայությանը մտահոգող սոցիալ-տնտեսական խնդիրները, անդրադառնալ ազգային ներքին անցուդարձին և ազգային կառույցների թերացումներին: Այս շրջանում ուշադրություն էր դարձվում առավելապես հայ պանդուխտների հիմնահարցերին: «Արծվիկ Տարոնոն» պանդխտությունը դիտարկում էր որպես մի չարիք, որը սպառնում էր դատարկել հայրենիքը: Պանդխտության դեմն առնելու համար Գ. Սրվանձտյանցը ներկայացնում է իր մշակած ծրագիրը: Այն ենթադրում էր սոցիալական բարեփոխումներ արևմտահայ գյուղում: Ծրագիրն առավել քան անիրականանալի էր: Գ. Սրվանձտյանցը պարբերականի միջոցով դիմում էր Կ. Պոլսի հայ մեծահարուստներին, որ նրանք հողատարածքներ գնեին բուն արևմտահայ գավառում և այնտեղ կառուցեին գործարաններ: Արևմտահայության տնտեսական վիճակի բարելավման ծրագրում արտահայտված է Սրվանձտյանցի համակրանքը Մ. Նալբանդյանի հայացքների նկատմամբ:

1865 թ. «Արծվիկ Տարոնոն» դադարում է լույս տեսնել:

«ԲՅՈՒԹԱՆԻԱ»

(1910 - 1912 թթ.)

«Բյութանիա» շաբաթաթերթը լույս է տեսել 1910-1912 թթ. նախ՝ Կ. Պոլսում՝ (1910 թ. թիվ 1), հետո՝ Իզմիրում (1910 թ. թիվ 2 – 1911 թ. թիվ 9), ապա՝ Ատաբազարում (1911 թ. թիվ 10-ից մինչև վերջ): Այն սկզբում տասնօրյա պարբերականությամբ է տպագրվել, իսկ 1911 թվականի թիվ 22-ից մինչև հրատարակության վերջին շրջանը լույս է տեսել շաբաթը երկու անգամ:

«Բյութանիայի» պատասխանատու-տնօրենը Հակոբ Ղ. Սարգիսյանն էր, իսկ արտոնատերը՝ Սիմոն Ղ. Սարգիսյանը:

Թերթի խմբագրությունը գտնվում էր Իզմիրում, բայց այն կենտրոնատեղեր ուներ Կ. Պոլսում, Իզմիրում, Կալկաթայում, Գատը-գյուղում: Ուներ գործակալներ Ատաբազարի, Պարտիզակի, Կեյվեի, Գարամուր-սալի, Եալովայի շրջաններում:

«Բյութանիայի» հիմնական աշխատակիցներն էին Աշոտ Պազպազյանը, Հակոբ Մելիտոսյանը, Հովհաննես Փիլիկյանը, Հակոբ Խաչերյանը, Միհրան Փափազյանը, Արշավիր Բեիսյանը, Թորոս Սոֆյանը, Անդրանիկ Չալգյանը, Կարապետ Չիլյանը, Մանասե Տոնիկյանը, Հարություն Մանթաշյանը, Կարապետ Սեբեթյանը, Հակոբ Քյուֆեճյանը, Աղասի Մկրտայանը և այլք:

Հիմնական բաժիններն ու խորագրերը անփոփոխ էին ու կայուն: Դրանք էին՝ «Խմբագրական», «Մեր գավառը», «Գյուղի ցավերեն», «Թղթակցություններ», «Ազատ բեմ», «Բաց նամակ», «Նամակ խմբագրության», «Փաստաթղթեր», «Գրական», «Մատենադարան», «Մանրանկարներ», «Ստացված գրքեր», «Նիկոմիդյան գործեր», «Լրատու», «Շրջանի լուրեր», «Տեղական», «Երկրագործական», «Հողային գրավումներ», «Առևտրական կյանք», «Նոթեր ու փոթեր», «Այժմեություններ» և այլն:

«Բյութանիան» գրական, քաղաքական-տնտեսական շաբաթաթերթ էր: Տեղական խնդիրներին զուգահեռ՝ պարբերականը անդ-

րադառնում էր պետական կարևոր հիմնահարցերին: «Բյութանիայի» «Տնտեսական» բաժնի նյութերը ներկայացնում էին տնտեսության այս կամ այն ոլորտում հայերի ունեցած ձեռքբերումները: «Բյութանիան» անդրադառնում էր երկրի տնտեսական քաղաքականությունը, որը հատուկ մշակված ծրագիր ուներ հայության ձեռքից տնտեսական լծակները խլելու, հայ ժողովրդին ունեգուրկ և աղքատ դարձնելու, հացի խնդիրը լուծելու նպատակով հայությանն իր հայրենիքից արտագաղթեցնելու համար: Շաբաթաթերթը քննարկում էր հողային հարցի պատճառները: Ներկայացնում էր իրենց տները վերադարձող հայ գաղթականների հանդեպ Թուրքիայում իրականացվող այն քաղաքականությունը, երբ պետական համապատասխան օղակներն ընդունում էին այնպիսի որոշումներ, որ հայրենադարձվող հայերը չկարողանային ետ ստանալ նախորդ կոտորածների ժամանակ իրենցից խլված հողերը, տները և կորցրած ունեցվածքի փոխհատուցումը: Հողային հարցը «Բյութանիան» համարում էր տնտեսական խնդիրների հիմնաքարը և դրա հետ էր կապում երկրում ծայր առած քաղաքական պայքարը: Ըստ գավառաթերթի՝ Թուրքիայում սոցիալ-տնտեսական հիմնահարցերը սերտորեն կապված էին քաղաքական խնդիրների, մասնավորապես Հայկական հարցի լուծման հետ:

«Բյութանիան» պատկերացում էր տալիս Նիկոմիդիա գավառի քաղաքների ու գյուղերի դպրոցներում տիրող իրավիճակի մասին: Տպագրում էր կրթական հիմնահարցերի շուրջ կարծիքներ ու տեսակետներ: Թերթը հիմնականում թղթակցությունների միջոցով ներկայացնում էր որևէ քաղաքի կամ դպրոցի հաջողությունները կամ բացթողումները:

Կրթական խնդիրների լուծմամբ շահագրգիռ աստաբազարցի մի խումբ երիտասարդներ բարձրացնում են կրթաթոշակը կրթական տուրքով փոխարինելու հարցը: «Բյութանիան» պաշտպանում է այդ առաջարկը: Թերթը գտնում էր, որ կարելի էր հաստատել ազգային ընդհանուր տուրք, որը պիտի բաշխվեր յուրաքանչյուր ընտանիքի

վրա՝ նրանց կարողության համեմատ: Հողվածագիր Աշոտ Պապա-
գյանի կարծիքով՝ այս առաջարկի շնորհիվ հնարավոր էր իրակա-
նացնել ձրի և պարտադիր ուսուցման գաղափարը: Դա հնարավո-
րություն կտար դպրոցներում ընդգրկել նաև աղքատ ընտանիքների
գավակներին:

Թերթի էջերում քննարկվում էին դպրոցների կրթական ծրագ-
րերն ու դասավանդման մեթոդները: Կրթական ծրագրերի բարեփո-
խումը «Բյութանիան» կապում էր կրթության աշխարհականացման
հետ:

«Բյութանիան» անդրադարձել է նաև իգական սեռի կրթության և
դաստիարակության խնդիրներին: Թերթը կարևորում էր իգական
սեռի համար բարձրագույն կրթության անհրաժեշտությունը, քանի
որ կանայք են դաստիարակում աճող սերնդին: «Բյութանիան»
բերում էր հաջողությունների հասած իգական վարժարանների
օրինակներ:

Շաբաթաթերթը անմասն չէր գրական-մշակութային անցուղար-
ձից: Թեև պարբերականի «Գրական» բաժինը ոչ բոլոր համարներում
էր առկա, բայց «Բյութանիայի» էջերում գրեթե մեկ բանաստեղծու-
թյուն մշտապես գտնում էր իր տեղը: Գրական-մշակութային կյանքը
քիչ է հետաքրքրել շաբաթաթերթին: 1912 թ. Օսմանյան խորհրդա-
րանական ընտրությունների շրջանում պարբերականը հիմնակա-
նում ուներ քաղաքական ուղղվածություն: «Բյութանիան» ընդհա-
նուր պատկերացում է տվել Նիկոմիդիայի մշակութային ոլորտի
անցուղարձի մասին:

Գրական արժեք են ներկայացնում «Ակնոցիս տակեն» շարքում
Սուրեն Սրենցի և «Մանրանկարներ» շարքում Կոռդի երգիծական
դիմանկարային նովելները Նիկոմիդիայի ազգային ջոջերի մասին:

«Բյութանիան» անդրադարձել է արվեստի զարգացման խնդիր-
ներին և մշակութային հիշարժան իրադարձություններին լուրի,
թղթակցության, վերլուծական հոդվածի տեսքով:

Գրականության և մշակութային կյանքի առաջընթացին նպաստելու նպատակով պարբերականի խմբագրակազմը 1910 թ. մարտի 14-ին Իզմիտի կայարանի հանդիպակաց սրճարանի պարտեզապատ սրահում բացում է «Բյութանիա» անունով լսարան-ընթերցարան: Այստեղ ընթերցասեր հանրությանն անվճար տրամադրվում էին Արևմտյան Հայաստանում և հայկական տարբեր գաղթօջախներում լույս տեսնող 40 անուն պարբերական հայալեզու և օտարալեզու գրականություն:

Մշակութային, տնտեսական կամ ընդհանուր առմամբ ազգային կյանքի առաջընթացը «Բյութանիան» կապում էր Հայկական հարցի լուծման կամ Թուրքիայում ազգային հիմնահարցերը սահմանադրական ճանապարհով լուծելու հետ:

«ՀՈՂԴԱՐ» (1910-1914 թթ.)

«Հողդարը» լույս է տեսել Մեքաստիա քաղաքում 1910-1914 թթ.: Հրատարակվել է շաբաթ օրը: Հիմնադիր խմբագիրը և արտոնատերն ու տնօրենը Կ.Ա.Պարսամյանն էր (1914 թվականին՝ Հ. Մ. Փոլադը):

Թերթը խորհրդանշում էր սվազցիների հողը և հայության ապագան: Դա պիտի լիներ մի դարաշրջան, երբ հայը փարվելով արտին՝ պիտի շենացներ հայրենիքը:

Հիմնական բաժիններն ու խորագրերն էին՝ «Թաղային դպրոցներ», «Կյանքը շրջանին մեջ», «Հայ գեղերեն», «Տնտեսական կյանք», «Քաղաքապետարան», «Լուրեր», «Թղթակցություններ», «Պոլիսեն հեռագրեր», «Տեղական լուրեր», «Ազգային լուրեր», «Քրոնիկ», «Շշուկներ», «Ստացված գրքեր» և այլն:

Թերթին աշխատակցում էին Դանիել Վարուժանը, Վահան Մոսկովյանը, Շահնուրը, Կարապետ Գաբիկյանը, Փայլակը. Գ.Գ.-ն, Ա.Ալիսյանը, Հուսը, Գևորգ Տերոյենցը (Գ.Տ.-ն), Չ.Միհրանը, Միհրան Չուգասզյանը, Պողոս Մոզյանը:

«Հողդարը» ազգային անկախ թերթ էր: Ուներ կրթական-մշակութային ուղղվածություն և բարձրաձայնում էր արևմտահայ դպրոցական համակարգի թերությունները՝ հայեցի կրթությունն ու դաստիարակությունը համարելով ազգապահպանության հիմնական միջոցը: Այդ հիմնահարցերին էր նվիրված պարբերականի խմբագրականների մեծ մասը: Պարբերականը կողմ էր ազգային համընդհանուր հանգանակության անցկացմանը հոգուս դպրոցների: Առաջարկում էր նաև ազգային վարժարաններում կրթությունը դարձնել ձրի և պարտադիր:

«Հողդարը» առաջին և երկրորդ էջերում զետեղում էր գավառահայ գրողների գրական-գեղարվեստական ստեղծագործությունները կամ տպագրում էր վերլուծական հոդված, որում քննարկում և

անդրադառնում էր որևէ մշակութային միջոցառման: Քանի որ Սեբաստիայում բավական ակտիվ էր թատերական կյանքը, պարբերականն անտարբեր չէր ներկայացումների և դերասանական խաղի հանդեպ: Երրորդ էջում տպագրում էին ազգային կյանքի այս կամ այն ոլորտից լուրեր: Չորրորդ էջում անդրադառնում էին կառավարական ու հասարակական-քաղաքական անցուդարձին լուրերի, հրապարակախոսական հոդվածների միջոցով:

Թղթակցություններն ու լուրերը ներկայացնում էին «Հոդդարի» սեփական թղթակիցները: Նրանց նյութերում ամփոփված էին 1910-1914 թթ. արևմտահայ գավառում և մասնավորապես Սեբաստիայում կատարվող դեպքերը, ազգային կյանքը, արևմտահայերին մտահոգող խնդիրները և նրանց ակնկալիքները:

«Շշուկներ» բաժնում տպագրում էին քաղաքային կամ գավառական անցուդարձի վերաբերյալ չճշտված լուրեր, բայց ոչ բամբասանքներ կամ սենսացիա պարունակող տեղեկություններ:

Այդ շրջանի արևմտահայ քաղաքական մյուս թերթերից «Հոդդարը» տարբերվում էր հատկապես իր գույժերով կամ մահախոսականներով: Դրանք ամփոփված էին «Տխրունի» խորագրի ներքո և հիմնականում ունեին երգիծական շեշտադրումներ, երբ գրվում էին ազգային գործիչների մահվան առիթներով:

Լրագրողական վարպետության առումով յուրահատուկ էին «Քաղաքապետարան» բաժնի վերլուծական հոդվածները: Դրանցում ներկայացվում էին քաղաքապետարանի աշխատանքներում նկատված թերությունները և պաշտոնատար անձանց չարաշահումները: Այս բաժնում օպերատիվ կերպով ժողովրդին ծանոթացնում էին թե՛ կառավարության, թե՛ քաղաքապետարանի ընդունած նոր օրենքների և որոշումներին:

Ազգային կյանքում էական իրադարձության կամ երևույթի մասին լուրը «Հոդդարը» տպագրում էր «Կարևոր» խորագրի ներքո:

Արևմտահայ հասարակական-քաղաքական, գրական-մշակութային կյանքի լուրերը ներկայացվում էին «Քրոնիկ» բաժնում թղ-

թակցությունների, ռեպորտաժների և վերլուծական հոդվածների միջոցով:

Ուշագրավ էր «Ցիր ու ցան հայրենակիցներ» բաժինը: Այստեղ ներկայացնում էին այն սեփաստացիներին, ովքեր տարիներ առաջ հեռացել էին հայրենիքից, բայց կապված էին նրան և օտարության մեջ պատվաբեր գործողություններով էին հանդես գալիս:

Քաղաքական լրաքաղը տեղեկությունները ներկայացնում էր հիմնականում մեկ նախադասությամբ: Նյութերի մատուցման առումով սա նույնպես նորություն էր այդ շրջանի արևմտահայ գավառական մամուլի համար:

«Հողդարին» մտահոգում էին Սեփաստիայի հայության սոցիալ-տնտեսական, քաղաքական հիմնախնդիրները, նրանց բարոյական և ազգային հոգեկերտվածքի խաթարման երևույթները, հոգևոր հովիվների՝ իրենց կոչմանն անհարիր կեցվածքն ու պահվածքը և ազգային կրթօջախների հիմնահարցերը:

Պարբերականը կարևորում էր երկրագործության դերը: Նյութեր էր տպագրում անասունների խնամքի և գյուղատնտեսական մթերքների պատրաստման մասին՝ այդպիսով հարստացնելով ընթերցողների գիտելիքները: Հետաքրքրությամբ էին ընթերցվում արևմտահայ գյուղացիների վիճակը ներկայացնող նյութերը: Ըստ թերթի՝ նրանք կրկնակի շահագործման էին ենթարկվում թուրք և հայ մեծահարուստների ու Առաջնորդարանի կողմից:

«Հողդարը» ներկայացնում էր նաև Սեփաստիայի բանվորների և հատկապես բանվորուհիների սոցիալական ծանր վիճակը: Լուսաբանում էր հոգուտ բանվորների կազմակերպված միտինգները, կոչ էր անում դիմել գործադուլի՝ հանուն իրենց իրավունքների պաշտպանության: Սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը թերթը կապում էր մի կողմից՝ արևմտահայերի քաղաքական իրավագուրկ վիճակի, մյուս կողմից՝ ազգային և պետական կառույցների՝ հարկ եղածին պես չգործելու հանգամանքի հետ:

«Հողդարն» անդրադառնում էր Մեքաստիայի քաղաքական տեղաշարժին, տեղի ազգային մարմինների աշխատանքին: Հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող նյութերը մեծ մասամբ զետեղվում էին «Թղթակցություն» և «Քրոնիկ» բաժիններում: Դրանք տեղեկացնում էին Մեքաստիայում հայերի հանդեպ իրականացվող բռնարարքների, ալան-թալանի, ջարդի ու սպանդի մասին: Պարբերականը քաղաքական հնչերանգ է ստանում, երբ Մեքաստիայում, ինչպես ողջ Թուրքիայում, նախապատրաստվում էին խորհրդարանական ընտրություններին (1912 թ., 1914 թ.): 1914 թ. թերթի քաղաքական տեսակետներն ավելի սուր են դառնում՝ խմբագիր Հ. Փոլադի գալով: «Հողդարը» լուսաբանում էր Օսմանյան երեսփոխանական ընտրությունների գործընթացը, այն համակարգող Համազգային մասնախմբի աշխատանքները: Պաշտպանում էր Պատրիարքարանի դիրքորոշումը Օսմանյան խորհրդարանական ընտրությունների և հայ թեկնածուների վերաբերյալ: Թերթը կոչ էր անում պաշտպանել Պատրիարքարանի պահանջները և չմասնակցել ընտրություններին, եթե դրանք չընդունվեին:

ՎԱՆԻ «ԱՇԽԱՏԱՆՔ»
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
(1910 – 1915 թթ.)

1910-1915 թթ. Վանում լույս է տեսել «Աշխատանք» գրական, քաղաքական և տնտեսական շաբաթաթերթը: Խմբագիրը ՀՅԴ անվանի դեմքերից մեկն էր՝ Իշխան Միքայելյանը: «Աշխատանքը» ոչ թե ՀՅԴ պաշտոնաթերթ էր, այլ կուսակցական հրատարակություն, որը լուսաբանում էր Վանի վիլայեթի հիմնախնդիրները, ներքին կյանքն ու առօրյան: Սկզբնական շրջանում, ինչպես բնորոշ էր Օսմանյան Թուրքիայում այդ ժամանակահատվածում հրատարակվող հայկական թերթերին ու ամսագրերին, Վանի «Աշխատանքը» տարված էր համընդհանուր բարեփոխումների և արևմտահայերի իրավահավասարության հովերով: Սկսած 1913 թվականից՝ թերթը ներկայացնում էր թուրքական իշխանությունների երկդիմի քաղաքականությունը հայերի հանդեպ: Հրատարակության վերջին ամիսներին այն դառնում է 1915 թ. Վանում տեղի ունեցած պատմաքաղաքական դեպքերի վավերագիր փաստաթուղթ: «Օրը օրին» խորագրի ներքո արձանագրված են Վանի ինքնապաշտպանությունը, հաղթանակը, ինքնավարությունը, վերջին օրերի իրադարձությունները և այլն:

«Աշխատանքը» պարզաբանում էր, թե ինչո՞ւ Վանի հայ ընտրագանգվածը չէր մասնակցել Վանի վիլայեթի նահանգային ժողովի անդամների ընտրությանը: 1913 թ. խորհրդարանական ընտրությունների առիթով Պատրիարքարանը հայ քաղաքական կուսակցությունների, խմբակցությունների, հարանվանությունների ներկայացուցիչների հետ համախորհուրդ կառավարությանն էր դիմել թագրիքով, որով պահանջում էր ապահովել հայերի համար համեմատական և ազգային ընտրությունների իրավունք: Այդ խնդրանքը մերժվում է:

1913-1914 թթ. «Աշխատանքը» քննարկման առանձին նյութ էր դարձրել հայկական վեց նահանգների հանդեպ եվրոպական վերա-

հսկողության հաստատման հարցը: Թերթը վերլուծում էր Հայկական հարցին առնչվող բոլոր իրադարձությունները՝ ներկայացնելով այդ կապակցությամբ ծավալված քննարկումները: Հայերի վստահությունը պետության նկատմամբ կվերականգնվեր, եթե կամ եվրոպական շահագրգիռ պետությունների վերահսկողությունը հաստատվեր Թուրքիայի նկատմամբ, կամ իրագործվեր փոխադարձ վերահսկողություն հայ ժողովրդի և թուրքական իշխանությունների կողմից:

Առանձնահատուկ էր թերթի մոտեցումը հողային հարցին: Հողային հարցը ներկայացվում էր որպես ոչ միայն արևմտահայերին մտահոգող խնդիր, այլև որպես մի հարց, որի լուծմամբ շահագրգիռ էին Թուրքիայում բնակվող բոլոր ազգերի հողի աշխատավորները: «Աշխատանքը» հողային հարցի հետ կապված մանրամասներ էր տպագրում Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում տիրող իրավիճակների մասին: Թղթակցությունները գետեղվում էին «Հողային վեճ» կամ «Հողային հարց» խորագրերի ներքո:

«Աշխատանքը» բարձրաձայնում էր նաև կրթամշակութային խնդիրների լուծման հարցը: Անդրադառնում էր Վանի վիլայեթի գյուղական դպրոցների խնդիրներին: Այդ թեմայով հոդվածները գետեղվում էին «Կրթական գործը գավառներու մեջ» շարքում: «Աշխատանքը» առաջարկում էր հետևել եվրոպական զարգացած այն երկրների փորձին, որոնցում կային ազգային երկրորդական դպրոցներ: Մատնաշում էր կրթական ոլորտում առկա թերությունները, բացերն ու սխալները: Ազգային դպրոցների բարեփոխման ծրագրերի քննարկումներից բացի՝ «Աշխատանքը» փորձում էր նպաստել աճող սերնդի հոգևոր-մշակութային մակարդակի բարձրացմանը: Զետեղում էր ճանաչողական, գիտահանրամատչելի հոդվածներ, գրույցներ արվեստի և գրականության տարբեր խնդիրների վերաբերյալ:

«Աշխատանքը» տպագրում էր ոչ միայն արևմտահայ և արևելահայ, այլև օտարազգի անվանի գրողների լավագույն ստեղծագործությունները: «Գրական ակնարկներ» շարքում բանավեճի հնարավոր

րություն էր տալիս ժամանակի գրողներին՝ նրանց հուզող այն հարցերի վերաբերյալ, որոնք առնչվում էին մշակույթի ու գրականության զարգացման ուղիներին: Արևմտահայ գրականության զարգացումը թերթը կապում էր արևմտահայ գավառի հետ կապերը սերտացնելու հետ:

Ազգային կառույցների ու գործիչների հասցեին «Աշխատանքի» էջերում հնչող դժգոհություններն անհիմն չէին: Թերթը մի կողմից՝ լուսաբանում էր ազգային մարմինների աշխատանքը դրական ու բացասական կողմերով, մյուս կողմից՝ ներկայացնում էր դրանց բախումները պետական օղակների հետ:

«Աշխատանքը» լուսաբանում էր թե՛ Օսմանյան խորհրդարանի (Կ.Պոլսի «Ազատամարտ» օրաթերթից կատարված արտատպումների միջոցով), թե՛ Վանի Ազգային կենտրոնական ժողովի և ազգային կառույցների աշխատանքները:

1913 թ. թիվ 29-ից սկսած՝ «Աշխատանքում» խմբագրականները տպագրվում էին զուգահեռաբար թուրքերենով թուրք ընթերցողների համար: Բացվում են նոր խորագրեր՝ «Հողագրավումներ», «Գավառի և Վանի կյանքը», Եվրոպա և Հայկական հարցը», «Վիճակագրական», «Երեսփոխանական ժողով»:

1915 թ. ապրիլի 3-ի լույս 4-ի գիշերը թուրքերը անհավասար կռվում սպանում են Ի. Միքայելյանին: Նրա նահատակությունից հետո «Աշխատանքի» խմբագիր-հրատարակիչն էր Հմայակ Մանուկյանը: Նրա խմբագրության օրոք թերթը հրատարակվում էր չորեքշաբթի և շաբաթ օրերին: «Աշխատանքը» առավելապես անդրադառնում էր հայ ժողովրդի Եղեռնին՝ նորաբաց «Կացությունը գավառների մեջ» խորագրի ներքո: Թերթը ձգտում էր ինքնապաշտպանական և ազատագրական պայքարի ոգի ներարկել ընթերցողների մեջ, որոնց շրջանակն արդեն սահմանափակվում էր միայն Վան քաղաքով: Խմբագրակազմը կոչ էր անում մտածել և գործել հանուն Հայաստանի ազատագրման ու փրկության:

ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՈՒԼԻ ՑԱՆԿ

Ա

1. **Ա.-Ղո**, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Երևան, 1917:
2. **Ալեքսանյան Ա.**, Գրիգոր Զոհրապի կենսափիլիսոփայությունը, Երևան, 1997:
3. **Ալպոյաճյան Ա.**, Ազգային Սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը, Կ.Պոլիս, 1910:
4. **Ալպոյաճյան Ա.**, Անհետացող դեմքեր, Գրիգոր Զոհրապ, Կ.Պոլիս, 1919:
5. **Ալոյան Լ.**, Հետաքրքրության շրջանի «Մշակի» նշանավոր հրապարակախոսները, Երևան, 2007:
6. **Ասատրյան Ա.**, Հարություն Սըվաճյան, Երևան, 1967:
7. **Ասատուր Հ.**, Դիմաստվերներ, Կ.Պոլիս, 1921:
8. **Ասմաթյան Լ.**, Հայ գրական քննադատությունը XIX դարի 80-ական թթ., Երևան, 1979:
9. **Արամը** մահուան յիսնամեակին առթիւ, Երևան, 1991:
10. **Արծրունի Գ.**, Լրագրության մասին, Երևան, 2003:
11. **Արծրունի Գ.**, Հրապարակախոսության հատընտիր, Երևան, 2010:
12. **Արփիարյան Ա.**, Երկեր, Երևան, 1987:
13. **Արփիարյան Ա.**, Ժամանակակից պատմության էջեր, Բոստոն, 1979:
14. **Արփիարյան Ա.**, Պատմություն ԺԹ դարու Թուրքիո հայոց գրականության, Կահիրե, 1944:
15. **Արփիարյան Ա.**, Ընտիր երկեր, Երևան, 1951:
16. «Արևելյան մամուլ» հանդեսի մատենագիտություն (1871-1901), Երևան, 1976:
17. **Ատոմ**, Ազգային Սահմանադրությունը, Կ.Պոլիս, 1914:
18. **Ավետիսյան Յ.**, «Անահիտ» հանդեսը, Երևան, 1999:

Բ

1. **Բաշալյան Լ.**, Նորավեպեր և պատմվածքներ, Փարիզ, 1940:

Գ

1. **Գաբրիելյան Վ.**, Դանիել Վարուժան, Երևան, 1978:
2. **Գալեմքարյան Գ.**, Պատմություն հայ գրականության ի սկզբանե մինչև մեր ժամանակը, հ.Ա, Վիեննա, 1893:
3. **Գալեմքարյան Գ.**, Պատմություն հայ գրականության 1860-են մինչև մեր օրերը («Հանդես ամսօրյա», 1897, թիվ 2 և թիվ 9):

4. **Գալոյան Գ.**, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առձակատումներում (16 –րդ դարից 1917 թ.), Երևան, 2004:
5. **Գևորգյան Լ.**, «Մուրճ» ամսագիր, Երևան, 1982:
6. **Գևորգյան Լ.**, Գրիգոր Արծրունին և նրա «Մշակը», Երևան, 1996:
7. **Գևորգյան Ս.**, Ազգային-ազատագրական պայքարի խնդիրները Րաֆֆու հրապարակախոսությունում XIX դարի 70-80-ական թթ., Երևան, 1990:
8. **Գասպարյան Գ., Խտշյան Հ.**, Ազգային գերեզմանատուն հայոց Շիրիլի, Կ.Պոլիս, 1922:
9. **Գաբիկյան Խ.**, Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ, Բեյրութ, 1962:
10. **Գազանձյան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, Բոստոն, 1950:
11. Գրական ասուլիսներ, Կ. Պոլիս, 1913:
12. **Գրիգորյան Վ.**, Շանթի դրամատուրգիան, Երևան, 2002:

Դ

1. **Դանիելյան Ժ.**, Ռամկավար ազատական մամուլը այսօր-մատենագիտական ակնարկ, Բեյրութ, 1982:
2. **Դանիելյան Կ.**, Գրական մշակներ, Երևան, 1977:
3. **Դանիելյան Կ.**, Երեք դիմանկար, Թլկատինցի, Լ. Բաշայան, Առանձար, Երևան, 1982:
4. **Դանիելյան Ս.**, Հեթանոսական գրական շարժման պատմությունից, Երևան, 1988:
5. **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերեն, Յուլեր 1890են 1940, Երևան, 2003:

Ե

1. **Երեմյան Ս.**, Գրագետ հայեր, I շարք, Վենետիկ, 1913:
2. **Երեմյան Ս.**, Գրագետ հայեր, IV շարք, Վենետիկ, 1913:

Զ

1. **Զարդարյան Ռ.**, Ցայգալույս, Կ.Պոլիս, 1910:
2. **Զարդարյան Վ.**, Հիշատակարան, Կ. Գ. Կահիրե, 1934:
3. **Զոհրապ Գր.**, Գրականության մասին, Երևան, 1973:
4. **Զոհրապ Գր.**, Ծանոթ դեմքեր ու պատմվածքներ, Փարիզ, 1932:
5. **Զոհրապ Գր.**, Երկերի ժողովածու (երկու հատորով), Կ.1, Երևան, 1962:
6. **Զոհրապ Գր.**, Երկերի ժողովածու (չորս հատորով), Կ.Գ, Երևան, 2002:

Թ

1. **Թառոյան Կ.**, Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնապետության դեմ, Երևան, 2001:
2. **Թամրազյան Հ.**, Սիամանյոթ, Երևան, 1964:
3. **Թովչյան Ե.**, Երիտասարդ Թուրքիան և հայերը, Թիֆլիս, 1909:

Լ

1. **Լազեան Գ.**, Յեղափոխական դեմքեր, Գահիրե, 1945:
2. **Լեո**, Գրիգոր Արծրունի, հ. 3, Թիֆլիս, 1905:
3. **Լեո**, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ.Ա, Փարիզ, 1934:
4. **Լեո**, Երկերի ժողովածու, հ. VI, Երևան, 1987:
5. **Լևոնյան Գ.**, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946:
6. **Լևոնյան Գ.**, Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934:
7. **Լևոնյան Գ.**, Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության (1794-1934), Երևան, 1934:

Խ

1. **Խաչիկյան Գ.**, «Արփիար Արփիարյանը քննադատական ռեալիզմի տեսաբան («Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1988, թիվ 8):
2. **Խառատյան Ա.**, Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը, 1858-1896 (ծանոթագրություններ), Երևան, 1984:
3. **Խառատյան Ա.**, Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Երևան, 1989:
4. **Խառատյան Ա.**, Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), Երևան, 1995:
5. **Խառատյան Ա.**, Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Երևան, 1980:
6. **Խրիմյան Հ.**, Երկեր, Երևան, 1992:

Կ

1. **Կարապետյան Լ.**, Թլկատինցի, Երևան, 1966:
2. **Կարինյան Ա.**, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Երևան, 1956:
3. **Կարինյան Ա.**, Արևմտահայ լուսավորիչները 1860-1870-ական թթ. («Տեղեկագիր ԳԱ», Երևան, 1944, թիվ 6-7):

4. **Կիրակոսյան Ջ.**, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 70-ական թթ.), Երևան, 1978:
5. **Կիրակոսյան Ջ.**, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 80-ական թթ.), Երևան, 1980:
6. **Կիրակոսյան Վ.**, Արևմտահայ բանաստեղծությունը, 1890-1907 թթ., Երևան, 1985:
7. **Կոստանյան Է.**, Գարեգին Սրվանձտյանց, Երևան, 1979:
8. **Կոստանյան Է.**, Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000:
9. **Կոստանյան Է.**, Կոնտանդնուպոլսի «Արևելք» պարբերականը, Երևան, 2003:
10. **Կոստանյան Է.**, Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական -քաղաքական կյանքի պատմության (XIX դ. 80-ական թթ.), Երևան, 2005:

Հ

1. **Հակոբջանյան Ա.**, Առանձար, Երևան, 1972:
2. **Հակոբյան Հ.**, Հակոբ Պարոնյանը մեծ տերությունների դիվանագիտության քննադատ («Պատմա-բանասիրական հանդես», 2003, թիվ 1):
3. **Հակոբյան Ա.**, ՀՀ պարբերական մամուլի պատմություն (1918-1920), Երևան, 2005:
4. **Հակոբյան Ս.**, Արփիար Արփիարյան, Վիեննա, 1922:
5. **Հակոբյան Մ.**, Զմյուռնահայ պարբերական մամուլը (1839-1860 թթ.), Երևան, 1984:
6. **Հակոբյան Մ.**, Զմյուռնահայ պարբերական մամուլը (1861-1880 թթ.), Երևան, 1987:
7. **Հակոբյան Մ.**, «Մետեոր» ամսագիրը արևմտահայ լուսավորական-դեմոկրատական շարժման մեջ, Երևան, 1977:
8. **Հակոբյան Գ.**, Արևմտահայ նորավեպը, Երևան, 1996:
9. **Համբարյան Ա.**, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Երևան, 1965:
10. **Համբարյան Ա.**, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության մասին XIX դ. վերջ - XX դ. սկիզբ, Երևան, 1990:
11. Հայ էսթետիկական մտքի պատմությունից, գիրք 1, Երևան, 1974:
12. Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Երևան, 1974:
13. Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981:
14. Հայ նոր գրականության պատմություն, հ. 2, Երևան, 1962:
15. Հայ նոր գրականության պատմություն, հ. 3, Երևան, 1964:

16. Հայ նոր գրականության պատմություն, հ. 4, Երևան, 1973:
17. Հայ պարբերական մամուլի պատմությունից (խմբագրությամբ Ա. Կարինյանի), Երևան, 1963:
18. Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII- XIX դարեր, Գահիրե, 2006:
19. Հայ վեպի պատմություն (19-րդ դար), Երևան, 2005:
20. Հայ քննադատության պատմություն, հ. 2, Երևան, 1998:
21. Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակը և պատմության դասերը, գիտաժողովի նյութեր Ս. Ստեփանյանի խմբագրությամբ, Երևան, 2009:
22. Հայկական ռեալիզմի տեսության և պատմության հարցեր, Երևան, 1987:
23. **Հյուսյան Մ.**, Գրիգոր Զոհրապի արվեստը, Երևան, 1964:
24. **Հյուսյան Մ.**, Գրիգոր Զոհրապի գեղագիտական հայացքները (Զոհրապ Գր., Գրականության մասին, Երևան, 1973, էջ 3-44):
25. **Հասրաթյան Մ., Օրեշկովա Ս., Պետրոսյան Յ.**, Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986:
26. **Հովհաննիսյան Ա.**, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955:
27. **Հովհաննիսյան Ա.**, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 2, Երևան, 1956:
28. **Հովհաննիսյան Ռ.**, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի « Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965:
29. **Հովսեփյան Մ.**, Կ.Պոլսի ՀՀԴ մամուլը ազգային-ազատագրության ջանակիր 1909-1915 թթ., Երևան, 2003:
30. **Հովսեփյան Մ.**, ՀՀԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը (1909-1924 թթ.), Երևան, 2009:
31. **Հրանդ (Մ. Կյուրճյան)**, Ամբողջական երկեր, Փարիզ, 1931:
32. Հուշապատում ՀՅԴ (1890-1950 թթ.), Բոստոն, 1950:

Ղ

1. **Ղազարյան Հ.**, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967:
2. **Ղազարյան Հ.**, Գրիգոր Չիլինկիրյան, Երևան, 1959:
3. **Ղազարյան Հ.**, Մատթեոս Մամուրյան, Երևան, 1961:
4. **Ղուկասյան Վ.**, Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը (1832-1853), Երևան, 1975:

Ճ

1. **Ճինգոզյան Կ.**, Էջեր XIX դ. 50-60-ական թթ. գմյունահայ գրական շարժման պատմությունից («Պատմա-բանասիրական հանդես», 1982, թիվ 2):

Մ

1. **Մակարյան Ա.**, Գրական դիմանկարի զոհրապյան դպրոցը («Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2002, թիվ 1):
2. **Մակարյան Ա.**, Միքայել Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան, Երևան, 1946:
3. **Մամուրյան Մ.**, Երկեր, Երևան, 1966:
4. **Մանուկյան Ս.**, Լևոն Բաշալյան, Երևան, 1969:
5. **Մանուկյան Ս., Ասմարյան Լ.**, Ակնարկներ հայ գրականության պատմության, Երևան, 1984:
6. **Մարգարյան Հ.**, Տիգրան Կամսարական, Երևան, 1964:
7. **Մարտիրոսյան Ն.**, «Հայրենիք» ամսագրի հրապարակախոսությունը (1920-1930-ական թթ.), Երևան, 2001:
8. **Մարկոսյան Ս.**, Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Երևան, 1968:
9. «Մեղու» հանդեսի (1856-1865) մատենագիտություն (կազմող՝ Ա. Խառատյան), Երևան, 2003:
10. **Մխիթարյան Մ.**, XIX դարավերջի հայ ռեալիստական գրաքննադատության պատմությունից, Երևան, 1974:
11. **Մխիթարյան Մ.**, XIX դ. երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Երևան, 1976:
12. **Մնացականյան Լ.**, XIX դարավերջի հայ ռեալիստական գրաքննադատության պատմությունից, Երևան, 1974:
13. **Մնացականյան Լ.**, Արևմտահայ քննադատական մտքի պատմությունից, Երևան, 1982:
14. **Մնացականյան Լ.**, Քսաներորդ դարասկզբի արևմտահայ գրական քննադատությունը, Երևան, 1990:
15. **Մուրադյան Լ.**, Արփիար Արփիարյան. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1991:
16. **Մուրադյան Լ.**, Արփիար Արփիարյանը հրապարակախոս («Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1989, թիվ 1):

Ն

1. **Նալբանդյան Մ.**, Հրապարակախոսական երկեր, Երևան, 1979:
2. **Նալբանդյան Մ.**, Երկեր, Երևան, 1985:
3. **Ներսիսյան Ա.**, Ազգային-ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., Երևան, 1999:
4. **Ներսիսյան Մ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870-ական թթ., Երևան, 1955:
5. **Ներսիսյան Մ.**, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, 1982:

Շ

1. **Շահպազ Ս.**, Գրիգոր Զոհրապ, Բեյրութ, 1959:
2. **Շարուրյան Ա.**, Միսաք Մեծարենց, Երևան, 1983:
3. **Շարուրյան Ա.**, Դանիել Վարուժանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Երևան, 1984:
4. **Շարուրյան Ա.**, Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն, Էջմիածին, 1996:

Չ

1. **Չոպանյան Ա.**, Խրիմյան Հայրիկ, Փարիզ, 1925:
2. **Չոպանյան Ա.**, Լևոն Բաշալյան և իր գործը (Բաշալյան Լ., Նորավեպեր և պատմվածքներ, Փարիզ, 1940):

Պ

1. **Պարոնյան Հ.**, Երկերի ժողովածու (10 հատորով), հ.2, Երևան, 1964:
2. **Պարոնյան Հ.**, Երկերի ժողովածու (10 հատորով), հ.5, Երևան, 1965:
3. **Պարսամյան Վ.**, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958:
4. **Պետրոսյան Դ.**, Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում, Երևան, 2007:
5. **Պետրոսյան Հ.**, Գեղամ Տեր-Կարապետյան, Երևան, 1983:
6. **Պոզնանսկա Ք.**, Հին և նոր Թուրքիան, Երևան, 1985:
7. **Պոտուրյան Մ.**, Հայ մամուլը 15 տարուն մեջ (1894-1909 թթ.), Ս. Ղազար, 1909:

Ջ

1. **Ջրբաշյան Է.**, Գրական ժանրերի տեսության շուրջ, Երևան, 1973:
2. **Ջրբաշյան Է.**, Գեղագիտություն և գրականություն, Երևան, 1983:

Ռ

1. ՌԱԿ-ի մամուլի խմբագիրները (պատրաստեց՝ Յովիկ Էօրտեքեան), Երևան, 2005:
2. **Ռշտունի Վ.**, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956:

Ս

1. **Սապահ-Գյուլյան Ս.**, Երիտասարդ Թուրքիա, Երևան, 1991:
2. **Սարգսյան Ս.**, Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Երևան, 2009:
3. **Սարգսյան Ս.**, 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Երևան, 2010:
4. **Սարիկյան Ս.**, Գրական դիտողություններ, Երևան, 1964:
5. **Սարիկյան Ս.**, Հայ գաղափարաբանություն, Երևան, 1998:
6. **Սարիկյան Ս.**, Հայոց գրականության երկու դարը, գիրք II, Երևան, 1989:
7. **Սարիկյան Ս.**, Լևոն Շանթ, Երևան, 1991:
8. **Սարիկյան Ս.**, Ծերենց («Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1972, թիվ 3):
9. **Սարիկյան Ս.**, Պարոնյանի «Ծիծաղի» փիլիսոփայությունը («Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1993, թիվ 4):
10. **Սարիկյան Ս.**, Ռեալիզմի և ժողովրդայնության հարցերը 70-80-ական թթ. արևելահայ գրական քննադատության մեջ («Տեղեկագիր ԳԱ», Երևան, 1955, թիվ 4):
11. **Սարիկյան Ս.**, Վեպի պատմության և տեսության հարցեր («Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1998, թիվ 2):
12. **Սարիկյան Ս.**, Բաֆֆի, Երևան, 1985:
13. **Սարիկյան Ս.**, Հայկական ռոմանտիզմ, Երևան, 1966:
14. **Սարիկյան Ս.**, Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ, Երևան, 1958:
15. **Սարուխան, Հայկական խնդիրն ու Ազգային Սահմանադրությունը** Թուրքիայում (1860- 1910), Կ.Պոլիս, 1912:
16. **Սրվաճյան Հ.**, Հրապարակախոսություն, Երևան, 1960:
17. **Միմոնյան Պ.**, Հուշամատյան հայկական Զմյուռնյան, Փարիզ, 1932:
18. **Միրունի Հ.,** Էջեր արևմտահայ գրականության պատմութենեն («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1972, թիվ 1):
19. **Միրունի Յ.**, «Ազատամարտի» սերունդը («Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 3, 5-7, 9- 12):

20. **Միրունի Յ.**, Ռուբեն Զարդարեան («Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1925, թիվ 3):
21. **Միրունի Յ.**, Պոլիս և իր դերը, հ. 3, Անթիլիաս, 1987:
22. **Միրունի Յ.**, Պոլիս և իր դերը, հ. 4, Անթիլիաս, 1988:
23. **Միրունի Հ.**, Երբ զարուն էր 1913... («Սովետական գրականություն» ամսագիր, Երևան, 1966, թիվ 10):
24. **Ստեփանյան Գ.**, Արշակ Չոպանյան («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1972, թիվ 3):
25. **Ստեփանյան Գ.**, Արփիար Արփիարյան, Երևան, 1955:
26. **Ստեփանյան Գ.**, Հակոբ Պարոնյան, Երևան, 1964:
27. **Ստեփանյան Գ.**, Արփիար Արփիարյանի գրականագիտական հայացքները («Տեղեկագիր ԳԱ», Երևան, 1948, թիվ 12):
28. **Սողոմոնյան Գ.**, Նոր լրագրությունը Կ.Պոլսում 19-րդ դարի 80-ական թթ., Երևան, 2009:
29. **Սողոմոնյան Գ.**, Արևմտահայ մամուլն ու հրապարակախոսությունը 1880-ական թթ. («Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2001, թիվ 1):
30. **Սողոմոնյան Գ.**, «Մասիս» Արփիար Արփիարյանի խմբագրության տարիներին («Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2006, թիվ 1):

Վ

1. **Վարանդեան Մ.**, ՀՅԴ պատմություն, Երևան, 1992:
2. **Վրացյան Ա.**, 60-ամյակ (1890-1950 թթ.), Բոստոն, 1950:

Տ

1. **Տեմիրճեան Կ.**, Ռամկավար ազատական մամուլը երեկ և այսօր, («Նոր օր-Բացառիկ», Լոս Անճելես, 1982):
2. **Տեմիրճիպաշյան Ե.**, Երկեր, Երևան, 1988:
3. **Տեր-Խաչատուրեան Ա.**, ՀՅԴ 100-ամեայ մամուլը (1890-1990), Պէյրուս, 1990:
4. **Տեր-Վարապետյան Գ.**, Տարոնի աշխարհ, Երևան, 1995:
5. **Տեր-Գեորգեան Ա.**, Մեր մամուլը («Զարթոնք-Բացառիկ», Պէյրուս, 1962):

Բ

1. **Բիֆաթ Մ.**, Օսմանյան հեղափոխության մուր էջերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Երևան, 1990:

Փ

1. **Փանոսյան Ս.**, Լևոն Շանթ, Երևան, 1992:
2. **Փաստրմաջեան Գ.**, Ապրուած օրեր, Բոստոն, 1948:
3. **Փափազյան Վ.**, Գրականության մասին, Երևան, 1962:
4. **Փափազյան Վ.**, Հայ գրականության պատմություն, հ. 2, Կ.Պոլիս, 1914:

Ք

1. **Քալանթարյան Ժ.**, Հայ գրականագիտության պատմություն (V-XIX դարեր), Երևան, 1986:

Օ

1. **Օհանյան Ա.**, Լեոյի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 1969:
2. **Օշական Հ.**, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. IV, Երուսաղեմ, 1956:
3. **Օշական Հ.**, Գրաքննությունը և արևմտահայ մամուլը (կազմ.՝ Ա. Խառատյան), Երևան, 1984:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻԱՄ ՎՌԱՄԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(1832-1915 թթ.)

ԴԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլ 5,625:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1